

ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ԶԵԿՈՒՅՑ

2021

B | S | T The Black Sea Trust for Regional Cooperation

A PROJECT OF THE GERMAN MARSHALL FUND

CIVIL YOUTH CENTER

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել Black Sea Trust-ի՝ German Marshall Fund USA-ի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Կրթություն բոլորի համար» ծրագրի շրջանակներում:

Հրապարակման բովանդակության համար պատասխանատու է «Քաղաքացիական Երիտասարդական Կենտրոն» Համայնքային Զարգացման ՀԿ-ն եւ պարտադիր չէ, որ այն արտահայտի ֆինանսավորող կառույցի կամ նրա գործընկերների տեսակետը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ 4
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 5
ԿՐԹԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱՍԻՆ 6
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԻՄԸ 7
ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ 8
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 9
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 12
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ 13
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 14
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 18
ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՄԻՆՉ ՀԱՄԱՎԱՐԱԿԸ 18
ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻԸՆԹԱՑՔՈՒՄ 21
ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ 35
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 42
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 46
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 48
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ 48
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆԸ ՄԱՄՆԱԿՑԱԾ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ 65

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Գծապատկեր 1. Դպրոցների բաշխվածությունը ըստ բնակության տիպի 19
Գծապատկեր 2. Հանրակրթությունում համախառն ընդգրկվածության ցուցանիշը 19
Գծապատկեր 3. Համակարգչային հմտությունների տիրապետման ուսուցիչների ինքնագնահատումը (%) N=722 22
Գծապատկեր 4. Ուսուցիչների մասնակցությունը առցանց դասընթացներին եւ դասավանդումը 22
Գծապատկեր 5. Առցանց դասընացների արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ ուսուցիչների վերապատրաստման կարիքները (%) 23
Գծապատկեր 6. Հեռավար դասերից աշակերտների բացակայության պատճառները 24
Գծապատկեր 7. Արտակարգ դրության ժամանակ տեխնիկական միջոցների հասանելություն, ուսուցիչներ, %, N=722 24
Գծապատկեր 8. Կրթական քաղաքականության արդյունավետության գնահատումը, %, ուսուցիչներ, N=722.....26
Գծապատկեր 9. Կրթական քաղաքականության արդյունավետության գնահատումը, %, ուսուցիչներ, N=722.....27
Գծապատկեր 10. Դասերին չմասնակցելու պատճառները, աշակերտներ,(%) 28
Գծապատկեր 11. Աշակերտների զգացողությունները դպրոցում եւ հեռավար դասերի անցնելու հետ կապված, աշակերտներ, % նշումներից 28
Գծապատկեր 12. Հեռավար դասերին աշակերտների մասնակցության հաճախականությունը, %, N=867.....28
Գծապատկեր 14. Առցանց դասերի արդյունավետությունը.....29
Գծապատկեր 15. Առցանց դասերի արդյունավետությունը ուսուցիչների կարծիքով.....30
Գծապատկեր 16. Ուսուցիչների ապահովվածությունը համակարգչով.....35
Գծապատկեր 17. Մարզերում առցանց դասերին աշակերտների մասնակցության գնահատումը ուսուցիչների կողմից (%) 36
Գծապատկեր 18. Առցանց դասերին աշակերտների մասնակցության ակտիվության գնահատումը ուսուցիչների կողմից (%) 36
Գծապատկեր 19. Առցանց դասերին աշակերտների մասնակցության ակտիվության գնահատումը ծնողների կողմից (%), N=790.....36
Գծապատկեր 20. Առցանց ուսուցման հետ կապված խնդիրները ուսուցիչների կարծիքով 37
Գծապատկեր 21. Առցանց ուսուցման հետ կապված խնդիրները դպրոցի տնօրենների կարծիքով.....38
Գծապատկեր 22. Առցանց դասերի կազմակերպման որակի գնահատումը աշակերտների կողմից (%), N=823.....38
Գծապատկեր 23. Առցանց դասերին ուսուցիչների նախապատրաստման մեթոդները.....39
Գծապատկեր 24. Առցանց ձեւաչափով ուսուցիչների կողմից նոր դասի ներկայացման մեթոդները. .39
Գծապատկեր 24. Առցանց դասերի ժամանակ հին դասի ամրապնդման մեթոդները.....39
Գծապատկեր 26. Ըստ առարկաների՝ առցանց դասերի արդյունավետության գնահատումը աշակերտների կողմից 40
Գծապատկեր 27. Ծնողների տրամադրած ժամանակը երեխաների դասապատրաստմանը՝ մինչ արտակարգ դրությունը եւ արտակարգ դրության ժամանակ (%) N=800.....41

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԿԱՊԿՈՒ	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող
ԿՏԱԿ	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՆԶՊ	Նախնական զինվորական պատրաստություն
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ
ՏՀՏ	Տեղեկատվական եւ հաղորդակցության տեխնոլոգիաներ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱՍԻՆ

«Քաղաքացիական Երիտասարդական Կենտրոն» Համայնքային Զարգացման ՀԿ-ի առաքելությունն է խթանել հանրային միջոցների արդյունավետ կառավարումն ու տեղական ժողովրդավարության ամրապնդումը Հայաստանում՝ քաղաքացիական վերահսկողության եւ որոշումների կայացման գործընթացներում քաղաքացիների ներգրավման միջոցով:

Կազմակերպության շահառուներն են տեղական ինքնակառավարման մարմինները, համայնքային եւ պետական միջոցներով ֆինանսավորվող կառույցները, երիտասարդներն ու քաղհասարակության կազմակերպությունները:
Կազմակերպությունը գործունեություն է ծավալում հիմնականում քաղաքացիական կրթության եւ հանրային կառավարման ոլորտներում:

© «Քաղաքացիական Երիտասարդական Կենտրոն» Համայնքային Զարգացման ՀԿ
Հայաստան, Իջեւան, Անկախության 14/9

CIVIL YOUTH CENTER

Հեռ.՝ +374 98 58 68 78, +374 263 4 50 05
Էլ. հասցե՝ ijevancenter@gmail.com
Կայք: www.cyc.org.am

ԿՐԹԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱՍԻՆ

Կրթական հետազոտությունների եւ խորհրդատվությունների կենտրոնը կրթության, երիտասարդության, երեխաների հարցերով մասնագիտացած հետազոտական կենտրոն է: Կենտրոնը հիմնադրվել է 2012թ. եւ իրականացրել է մի շարք տեղական եւ միջազգային հետազոտություններ՝ հանրակրթության, բարձրագույն կրթության, ներառական կրթության, երիտասարդության, երեխաների պաշտպանության, ինչպես նաեւ աշխատաշուկայի վերաբերյալ:

© Կրթական հետազոտությունների եւխորհրդատվությունների կենտրոն

Հայաստան, Երեւան, 0010, Վազգեն Սարգսյան 26/3
Հեռ.՝+374 93 75 37 40
Էլ. հասցե՝ info@e-research.am
Կայք՝ www.e-research.am

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԻՄԸ

«Կրթություն բոլորի համար» ծրագրի ղեկավար՝ «Քաղաքացիական Երիտասարդական Կենտրոն» Համայնքային Զարգացման ՀԿ նախագահ Արփինե Երիցյան: Ծրագրի օգնականներ՝ «Քաղաքացիական Երիտասարդական Կենտրոն» Համայնքային Զարգացման ՀԿ համակարգող թիմի անդամներ՝ Էռնա Գալստյան, Ֆլորա Խաչատրյան:

Հարցազրուցավարներ՝ Լիլիթ Խաչատրյան, Սյուզաննա Մատինյան, Վարդուհի Անանյան, Նվարդ Բոցինյան, Հասմիկ Մանուկյան, Աննա Խաչատրյան, Սոնա Սարգսյան, Տաթեւ Ղազարյան, Նազանի Ասատրյան, Սուսաննա Սառիկյան:

Զեկույցի հեղինակներ՝ Կրթական հետազոտությունների եւ խորհրդատվությունների կենտրոնի փորձագիտական թիմ՝ Մարինա Գալստյան, Արման Մելքոնյան:

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

«Քաղաքացիական Երիտասարդական Կենտրոն» Համայնքային Զարգացման ՀԿ-ն եւ Կրթական հետազոտությունների եւ խորհրդատվությունների կենտրոնը իրենց երախտագիտությունն են հայտնում հետազոտության մասնակից աշակերտներին, ծնողներին, ուսուցիչներին, փորձագետներին, միջազգային եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ հետազոտությանը աջակցելու, հետազոտության առարկա հանդիսացող թեմայի վերաբերյալ իրենց կարծիքները եւ մտքերը վստահելու համար:

Շնորհակալություն ենք հայտնում նաեւ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությանը հետազոտությանը աջակցելու համար:

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

COVID-19 2020թ. լուրջ մարտահրավերների առաջ կանգնեցրեց կրթական համակարգը ինչպես գլոբալ մակարդակում, այնպես էլ առանձին երկրներում՝ ստիպելով արագ անցում կատարել ավանդական դասարանային ձեւաչափից դեպի առցանց ձեւաչափ: Հայաստանում 2020թ. մարտ ամսից՝ համավարակով պայմանավորված արտակարգ դրության հաստատումից հետո, հանրակրթական դպրոցները եւս անցան առցանց կրթության: Արդիական դարձավ այդ փորձի ուսումնասիրությունը՝ ուղղված առցանց կրթության ժամանակ առաջ եկած խնդիրների բացահայտմանն ու դրանց ուղղված լուծումների մշակմանը:

Համավարակի պայմաններում պետական կրթական քաղաքականության արդյունավետության գնահատման հետազոտությունը իրականացվել է «Քաղաքացիական Երիտասարդական Կենտրոն» Համայնքային Զարգացման ՀԿ-ի կողմից՝ German Marshall Fund-ի կողմից ֆինանսավորվող «Կրթություն բոլորի համար» ծրագրի շրջանակներում: Հետազոտության ընթացքում կազմակերպությունը համագործակցել է Կրթական հետազոտությունների եւ խորհրդատվությունների կենտրոնի հետ:

Հետազոտությունն իրականացվել է 2020թ. նոյեմբերից 2021թ. փետրվարն ընկած ժամանակահատվածում:

Հետազոտության նպատակն է գնահատել համավարակի պայմաններում Հայաստանում պետական կրթական քաղաքականության արդյունավետությունը՝ հետազոտելով հեռավար ուսուցման որակն ու հասանելիությունը մարզերում:

Հետազոտության շրջանակներում կիրառվել են տեղեկությունների հավաքագրման որակական եւ քանակական մեթոդներ, այդ թվում՝ առցանց հարցումներ 722 ուսուցիչների, 7-րդ եւ բարձր դասարանի 867 աշակերտների եւ 800 ծնողների շրջանում: Իրականացվել են 8 փորձագիտական, ինչպես նաեւ 16 որակական հարցազրույցներ կրթությունից դուրս մնացած աշակերտների ծնողների հետ, իրականացվել է վիճակագրական տվյալների եւ իրավական ակտերի վերլուծություն: Հետազոտության շրջանակներում գրավոր հարցումներ են ուղարկվել 30 մարզային դպրոցների տնօրեններին, ընդ որում՝ յուրաքանչյուր մարզից ընտրվել է 3-ական դպրոց՝ միջնակարգ, ավագ եւ հիմնական՝ պարզ պատահական ընտրանքի կիրառման մեթոդով:

Հետազոտության հիմնական արդյունքները՝

- Մինչ համավարակը աշակերտների եւ ուսուցիչների շրջանում արձանագրվել է համակարգչային հմտությունների պակաս, տեխնիկական միջոցների ոչ բավարար ապահովվածություն, ինչը բացասաբար է անդրադարձել առցանց դասերի արդյունավետության վրա:

- Հետազոտությանը մասնակից ուսուցիչների մեծ մասը մասնակցել է համակարգչային հմտությունների զարգացմանն ուղղված եւ հեռավար կրթության վերաբերյալ վերապատրաստումներին:

- Ուսուցիչների հիմնական մասը ապահովված է եղել համացանցով եւ տեխնիկական միջոցներով՝ առցանց դասերի կազմակերպման համար հիմնականում կիրառելով սմարթ հեռախոսներ:

- Ուսուցիչների հիմնական մասը ունի տեղեկատվական եւ հաղորդակցության (ՏՀՏ) ոլորտի վերապատրաստումների, այդ թվում՝ էլեկտրոնային կառավարման գործիքների կրթության կամ ուսուցման կարիք:

- Ուսուցիչների մեծ մասը դրական է գնահատում արտակարգ դրության ժամանակ առցանց կրթության կազմակերպմանն ուղղված ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ձեռնարկած քայլերը, որոնք ուղղված են եղել ուսուցիչների եւ աշակերտների կրթական կարիքների աջակցմանը, խնդիրներին արագ արձագանքմանը:

- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ձեռնարկած քայլերի վերաբերյալ ուսուցիչների հիմնական դժգոհությունն ու բացասական գնահատականը կապված է 2020թ. ապրիլի 27-ին ընդունված որոշման հետ, որով աշակերտների կիսամյակային գնահատականների հիմքում դրվեցին մինչ 2020թ. մարտի 13-ն ընկած ժամանակահատվածում արձանագրված ցուցանիշները՝ անտեսելով հեռավար դասերի ընթացքում ձեռք բերված գնահատականները:

- Աշակերտների շուրջ 90%-ը մասնակցել է առցանց դասերին, իսկ չմասնակցելու հիմնական պատճառ է հանդիսացել համացանցի անհասանելիությունն ու ցանկության բացակայությունը:

- Աշակերտները առցանց հարթակում առկա նորարարական կրթական գործիքներից արդյունավետ օգտվելու հմտությունների պակաս ունեն:

- Աշակերտների 95%-ը առցանց դասերին մասնակցել է հեռախոսով, սակայն համացանցի սակագները ոչ բոլոր աշակերտների համար են եղել մատչելի: Առցանց դասերին աշակերտների մասնակցության վրա ազդել է նաեւ տեխնիկական միջոցների պակասը:

- Հեռավար կրթության անցմամբ պայմանավորված՝ աշակերտների մոտ ի հայտ են եկել մի շարք սոցիալ-հոգեբանական խնդիրներ՝ անհանգստության, տագնապի զգացում:

Կրթական համակարգի վրա համավարակի թողած դրական հետեւանքներն են.

- Ճգնաժամային կառավարման փորձառության ձեռքբերում:

- Ենթակառուցվածքների ձեւավորում:
- Կրթական ռեսուրսների մշակում, զարգացում, տարածում:
- Կարողությունների զարգացում:
- Պետություն-մասնավոր հատված-դոնոր-համայնք համագործակցության զարգացում:
- Իրավական կարգավորում:
- Ուսուցիչ-ծնող համագործակցության սերտացում:
- Ուսուցչական համայնքի համագործակցության, փոխօգնության մշակույթի ձեւավորում:
- Դասապրոցեսը առավել արդյունավետ եւ ներառական դարձնելու հնարավորության ստեղծում:

Կրթական համակարգի վրա համավարակի թողած բացասական հետեւանքներն են.

- Կրթության իրավունքի իրացման անհնարինություն:
- Ուսուցիչների՝ համակարգչային հմտությունների եւ դասապրոցեսը առցանց եղանակով իրականացնելու մեթոդական հմտությունների փորձարկում:
- Առցանց կրթության մոնիտորինգի եւ գնահատման համակարգի բացակայություն:
- Ընտանիքի անվերահսկելի եւ ուղղակի ազդեցություն աշակերտների ուսուցման գործընթացի վրա:
- Ֆիզիկական շփման բացակայություն:
- Սոցիալական լարվածության սրում:
- Աշակերտների անձնային որակների փորձարկում:
- Կրթական համակարգում սոցիալական արդարության, հավասարության, մասնակցայնության սկզբունքի խախտում:

- Եվ՛ ծնողները, եւ՛ ուսուցիչներն ու աշակերտները նշել են, որ աշակերտների հիմնական մասը մասնակցել է առցանց դասերին, մինչդեռ առցանց կրթության հիմնախնդիրների շարքում ուսուցիչները մատնանշել են աշակերտների ցածր մասնակցությունը:

- Աշակերտներն առավել բարձր են գնահատել դասավանդման նյութերի հասանելիությունը եւ առավել ցածր՝ երեխաների նկատմամբ անհատական մոտեցում կիրառելու հնարավորությունը:

- Առցանց դասերը հիմնականում վերարտադրել են ավանդական դասարանային ձեւաչափը, ինչն էլ էականորեն ազդել է դրանց արդյունավետության վրա:

- Ուսուցիչների եւ ծնողների համեմատ՝ աշակերտները ավելի բարձր են գնահատել առցանց դասերի արդյունավետությունը:

- Ի տարբերություն բնագիտական առարկաների՝ աշակերտները եւ ծնողները առավել արդյունավետ են համարել հումանիտար առարկաների առցանց դասավանդման արդյունավետությունը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2020թ. COVID-19 նոր համավարակի բռնկումը շոշափելի ազդեցություն ունեցավ ամբողջ աշխարհում ուսումնական գործընթացի կազմակերպման վրա: Համավարակի հետագա տարածման կանխարգելման անհրաժեշտությունը հանգեցրեց դպրոցների փակմանը, ինչը բացասաբար անդրադարձավ ավելի քան 1,5 միլիարդ երեխայի կրթության իրավունքի իրացման վրա՝ առաջացնելով համաշխարհային կրթական ճգնաժամ[1]: Համավարակով պայմանավորված արգելափակումների հաղթահարման նպատակով տարբեր երկրների կրթական գերատեսչությունների ավելի քան 90%-ը որդեգրեց հեռավար ուսուցման քաղաքականությունը[2]:

2020թ. մարտի 16-ին ՀՀ Կառավարության N 298-Ն որոշմամբ[3] Հայաստանում եւս հայտարարվեց արտակարգ դրություն. կրթական ուսումնական հաստատությունները անցում կատարեցին հեռավար կրթության՝ պայմանավորված երկրում համավարակի տարածման դեպքերի եւ Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից վարակը որպես պանդեմիա որակելու հանգամանքի հետ:

Սույն հանգամանքով պայմանավորված՝ «Քաղաքացիական Երիտասարդական Կենտրոն» Համայնքային Զարգացման ՀԿ-ն German Marshall Fund-ի կողմից ֆինանսավորվող «Կրթություն բոլորի համար» ծրագրի շրջանակներում, համագործակցելով Կրթական հետազոտությունների եւ խորհրդատվությունների կենտրոնի հետ, 2020թ. նոյեմբերից 2021թ. փետրվարն ընկած ժամանակահատվածում իրականացրեց համավարակի պայմաններում պետական կրթական քաղաքականության արդյունավետության գնահատում, որը մասնավորապես ուղղված էր ՀՀ մարզային դպրոցներում կրթության որակի, հասանելիության եւ արդյունավետության բաղադրիչների ուսումնասիրմանը:

Հետազոտությունը ուղղված է նաեւ մասնակցային ձեւով հեռավար կրթության խնդիրների վերհանմանն ու դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների մշակմանը:

[1]What Have We Learnt? Findings from a survey of ministries of education on national responses to COVID-19 October 2020, https://data.unicef.org/resources/national-education-responses-to-covid19/[04.05.2021]

[2] How many children and young people have internet access at home?Estimating digital connectivity during the COVID-19 pandemic, December 2020, https://www.unicef.org/media/88381/file/How-many-children-and-young-people-have-internet-access-at-home-2020.pdf[04.05.2021]

[3]https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140212 [04.05.2021]

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է գնահատել համավարակի պայմաններում Հայաստանում պետական կրթական քաղաքականության արդյունավետությունը՝ ուսումնասիրելով հեռավար ուսուցման որակն ու հասանելիությունը մարզերում։

Հետազոտության նպատակին ուղղված խնդիրներն են՝

- Առցանց ուսուցման շրջանակներում 30 մարզային դպրոցներում կրթական ծառայությունների հասանելիության եւ որակի գնահատում։
- Պետական եւ միջազգային ռեսուրսների մոբիլիզացմանը միտված պետական ռազմավարության վերլուծություն՝ ուղղված կրթության շարունակականության ապահովմանը։
- Սովորողների եւ ուսուցիչների կարիքների արձագանքմանն ուղղված մեխանիզմների արդյունավետության վերլուծություն։

Ակնկալվում է, որ հետազոտության կողմից արձանագրված խնդիրներն ու դրանց հիման վրա մշակված առաջարկությունները կրթության ոլորտում քաղաքականություն իրականացնողներին հնարավորություն կտան բարեփոխել հեռավար կրթությանն առնչվող քաղաքականությունները, ինչպես նաեւ բարելավել արտակարգ իրավիճակներում կրթական համակարգի արդյունավետ արձագանքման մեխանիզմները։

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտությունը անդրադարձել է 2020թ. մարտ-մայիս ժամանակահատվածում հեռավար կրթության կազմակերպման առանձնահատկությունների ուսումնասիրմանը:

Հետազոտության սահմանված նպատակին եւ խնդիրներին հասնելու համար կիրառվել են տեղեկատվության ստացման հետեւյալ մեթոդները.

N:		Փաստաթղթերի վերլուծություն	Որակական/խորին առցանց հարցազրույցներ առանցքային տեղեկատուների հետ	Առցանց հարցում
1	Առցանց ուսուցման շրջանակներում 30 մարզային դպրոցներում կրթական ծառայությունների հասանելիության եւ որակի գնահատում:	+	+	+
2	Պետական եւ միջազգային ռեսուրսները մոբիլիզացմանը միտված պետական ռազմավարության վերլուծություն՝ ուղղված կրթության շարունակականության ապահովմանը:	+	+	
3	Սովորողների եւ ուսուցիչների կարիքների արձագանքմանն ուղղված մեխանիզմների արդյունավետության վերլուծություն:	+	+	+

1. **Փաստաթղթերի վերլուծություն**

- Պաշտոնական վիճակագրության ուսումնասիրություն: Ուսումնասիրվել է հանրակրթության վերաբերյալ վերջին 3 տարիների վիճակագրությունը՝ հանրակրթական դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշը, աշակերտների «ճշգրտված զուտ ընդգրկվածության» ցուցանիշը:
- Մարզպետարաններից, դպրոցի տնօրեններից ստացված վիճակագրական տեղեկատվության վերլուծություն:
- Վերջին 3 տարիների ընթացքում իրականացված կրթական հետազոտությունների երկրորդային ուսումնասիրություն:
- Իրավական ակտերի ուսումնասիրություն:
- Միջազգային եւ հասարակական կազմակերպությունների ծրագրային փաստաթղթերի ուսումնասիրություն:

2. **Որակական/ խորին առցանց հարցազրույցներ առանցքային տեղեկատուների հետ**

- Կրթական քաղաքականություն մշակողներ (3 հարցազրույց):
- Կրթության փորձագետներ եւ հետազոտողներ (3 հարցազրույց):
- Միջազգային եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (2 հարցազրույց):
- Առցանց անհատական հարցազրույցներ Հայաստանի մարզերի խոցելի (կրթությունից դուրս մնացած) խմբերի երեխաների ծնողների հետ (16 հարցազրույց): Ծնողները ընտրվել են պատահականության սկզբունքով՝ կրթությունից դուրս մնացած աշակերտների ցանկից:

3. **Զանգվածային առցանց հարցումներ**

Հարցումները անց են կացվել Հայաստանի բոլոր մարզերում, մասնակիցների կազմն ու բաշխվածությունը ներկայացված է ստորեւ.

- 867 աշակերտ (7-րդ եւ բարձր դասարանի աշակերտներ)
- 722 ուսուցիչ
- 800 ծնող

Հետազոտության առանձնահատկությունները

Հետազոտությունն իրականացվել է 2020թ. սեպտեմբերի 27-ից վերսկսած հայ-ադրբեջանական ռազմական հակամարտությունների, ինչպես նաեւ դրան հաջորդած հետպատերազմյան իրականության պայմաններում, ինչը կարող էր ազդել հարցման մասնակիցների ընդհանուր տրամադրությունների եւ կարծիքների վրա:

Հետազոտությունը իրականացվել է միայն առցանց ձեւաչափով, ինչը կարող էր անդրադառնալ համացանց եւ համակարգչային տեխնիկա չունեցող աշակերտների, ուսուցիչների եւ ծնողների մասնակցության վրա:

Հետազոտության արդյունքները մեկնաբանելիս հարկավոր է հաշվի առնել տերմինաբանական համընկնումները: Այսպես՝ ըստ Միավորված ազգերի կրթական, գիտական եւ մշակութային կազմակերպության (UNESCO) զեկույցի՝ «հեռավար ուսուցում» եզրույթը հաճախ փոխարինվում է «առցանց ուսուցում», «էլեկտրոնային ուսուցում», «հեռավար կրթություն», «զանգվածային բաց առցանց դասընթացներ» (MOOC) տերմիններով[4]:

[4]UNESCO. 2020. "Ensuring effective distance learning during COVID-19 disruption: Guidance for teachers". Accessed February 20, 2020, http://sli.bnu.edu.cn/uploads/soft/201216/2_1753415031.pdf

Հետազոտության ընտրանքը

Առցանց հարցումներն իրականացվել են ՀՀ բոլոր մարզերի աշակերտների, ուսուցիչների եւ ծնողների շրջանում: Հարցվածների ընդհանուր թիվը կազմում է 2389 մարդ: Առցանց հարցման հղումները տարածվել են սոցիալական ցանցերի միջոցով, ինչպես նաեւ գործընկեր կազմակերպությունների կայքէջերով:

Հետազոտությունը իրականացվել է մարզային 30 դպրոցներում՝ 3-ական դպրոց յուրաքանչյուր մարզում, որոնց տնօրեններին ուղղվել են տեղեկատվության հարցումներ՝ առցանց ուսուցման կազմակերպման որակի եւ հասանելիության վերաբերյալ նրանց դիտարկումներին ու կարծիքներին ծանոթանալու համար: Յուրաքանչյուր մարզից ընտրվել են մեկական միջնակարգ, ավագ եւ հիմնական դպրոցներ՝ պարզ պատահական ընտրանքի կիրառման մեթոդով: Հետազոտության ընտրանքն ըստ բնակավայրերի, ուսումնական հաստատության տիպի, տեղեկատվության ստացման աղբյուրների՝ ներկայացված է ստորեւ.

Աղյուսակ 1. Հետազոտությանը մասնակցած դպրոցների ցանկ

	Մարզ	Դպրոց
1	Արագածոտն	ք. Թալինի թիվ 2 հմ/դ
2	Արագածոտն	գ. Ղազարավանի մ/դ
3	Արագածոտն	ք. Աշտարակի Ն. Սիսակյանի անվ. թիվ 5 ա/դ
4	Արարատ	ք. Վեդիի թիվ 2 հմ/դ
5	Արարատ	գ. Մրգավետի մ/դ
6	Արարատ	ք. Արտաշատի ա/դ
7	Արմավիր	ք. Արմավիրի թիվ 8 հմ/դ
8	Արմավիր	գ. Նոր Արտագերսի մ/դ
9	Արմավիր	ք. Վաղարշապատի Մ.Գորկու անվ. թիվ 5 ա/դ
10	Գեղարքունիք	ք. Մարտունու թիվ 2 հմ/դ
11	Գեղարքունիք	գ. Ծափաթաղի Հ. Աբրահամյանի անվ. մ/դ
12	Գեղարքունիք	ք. Ճամբարակի ա/դ
13	Լոռի	ք. Սպիտակի Վարդանանց թիվ 4 հմ/դ
14	Լոռի	գ. Բազումի մ/դ
15	Լոռի	ք. Վանաձորի Տերյանի անվ. թիվ 5 ա/դ
16	Կոտայք	ք. Չարենցավանի Ե.Չարենցի անվ. թիվ 5 հմ/դ
17	Կոտայք	գ. Ջրառատի մ/դ
18	Կոտայք	ք. Հրազդանի Հ.Օրբելու անվ. թիվ 13 ա/դ
19	Շիրակ	ք. Արթիկի թիվ 5 հմ/դ
20	Շիրակ	գ. Ազատանի մ/դ
21	Շիրակ	ք. Գյումրու թիվ 26 ա/դ
22	Սյունիք	ք. Սիսիանի թիվ 2 հմ/դ

23	Սյունիք	գ. Դարբասի մ/դ
24	Սյունիք	ք. Կապանի թիվ 9 ա/դ
25	Վայոց Ձոր	գ. Սարավանի հմ/դ
26	Վայոց Ձոր	գ. Ելփինի մ/դ
27	Վայոց Ձոր	ք. Եղեգնաձորի թիվ 3 ա/դ
28	Տավուշ	գ. Կիրանցի հմ/դ
29	Տավուշ	գ. Այգեհովիտի մ/դ
30	Տավուշ	ք. Իջևանի թիվ 2 ա/դ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՄԻՆՉ ՀԱՄԱՎԱՐԱԿԸ

Հանրակրթության գլխավոր նպատակը երեխաների, սովորողների մտավոր, հոգեւոր, ֆիզիկական եւ սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է, նրանց պատշաճ վարքի եւ վարվելակերպի ձեւավորումը:[5]

2019-2020թթ. ուսումնական տարում ՀՀ-ում գործել է 1400 հանրակրթական ուսումնական հաստատություն, որից 1353-ը՝ պետական: Մարզային կտրվածքով դպրոցների բաշխումն ըստ իրականացվող հանրակրթական հիմնական ծրագրի եւ կրթական ծրագրի աստիճանի՝ ներկայացված է ստորեւ բերված աղյուսակում.

Աղյուսակ 2. Դպրոցների բաշխումն ըստ իրականացվող կրթական ծրագրի աստիճանի եւ մարզերի

Հանրակրթական ուսումնական հաստատությունների ընդհանուր քանակը Հայաստանում՝ ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի (2019-2020թթ.)												
Մարզեր	Արագած.	Արարատ	Արմավիր	Գ-ունիք	Երեւան	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վ. Ձոր	Տավուշ	Ընդամենը
Տարրական դպրոցներ (1-4 դասարաններ)	0	0	0	2	3	0	0	3	2	0	0	10
Միջին դպրոցներ (5- 9 դասարաններ)	0	0	0	0	2	0	0	0	0	0	0	2
Հիմնական դպրոցներ (1-9 դասարաններ)	37	21	20	26	152	68	31	41	35	14	24	469
Ավագ դպրոցներ (10-12 դասարաններ)	3	5	6	7	40	13	11	7	5	2	5	104
Վարժարաններ (5-12 դասարաններ)	0	0	1	0	3	2	0	4	0	0	1	11
Միջնակարգ դպրոցներ (1-12- դասարաններ)	80	86	93	90	49	80	59	108	75	32	52	804
Ընդամենը	120	112	120	125	249	163	101	163	117	48	82	1400

Դպրոցների 62.6%-ը գտնվում է գյուղական բնակավայրերում, 37.4%-ը՝ քաղաքային:

Դպրոցների բաշխվածությունը մարզերում՝ ըստ քաղաքային եւ գյուղական բնակավայրերի, կարելի է տեսնել ստորեւ բերված գծապատկերում:

[5]«Կրթության մասին» ՀՀ օրենք, Երեւան,1999թ., https://www.arlis.am/documentview.aspx?docid=91364

Գծապատկեր 1. Դպրոցների բաշխվածությունը ըստ բնակության տիպի



2019-2020թթ. ուսումնական տարում հանրակրթական համակարգում սովորել է 390,512 աշակերտ, որից 48%-ը՝ աղջիկներ: Նույն ուսումնական տարում ուսուցիչների ընդհանուր թիվը կազմել է 31 000, որից 3600-ը կենսաթոշակային տարիքի են՝ շուրջ 11,6%-ը: Հիմնական դպրոցում աշակերտների ընդգրկվածության ցուցանիշը 2019թ. եղել է 90%, միջնակարգ դպրոցում՝ 83,2%, իսկ ավագ դպրոցում՝ 59,5%:

Գծապատկեր 2. Հանրակրթությունում համախառն ընդգրկվածության ցուցանիշը



Մի շարք հետազոտություններ վկայում են հանրակրթական համակարգում բովանդակային լուրջ բացերի առկայությունը, ինչը խոչընդոտ է հանդիսանում երեխաների մտավոր, հոգեւոր, ֆիզիկական եւ սոցիալական ունակությունների զարգացման համար[6]:

Հետազոտության առանցքային տեղեկատուները՝ կրթության ոլորտի փորձագետներն ու կրթական քաղաքականություն մշակողները, եւս բարձրաձայնեցին հանրակրթության ոլորտում այսօր առկա մի շարք համակարգային եւ բովանդակային խնդիրների մասին: Վեր հանված խնդիրները ներկայացված են ստորեւ.

Համակարգային խնդիրներ

- Ուսուցչի մասնագիտության ոչ հրապուրիչ լինելը:
- Փաստերի եւ վերլուծությունների վրա հիմնված քաղաքականության մշակման բացակայությունը:
- Կրթության թերի ֆինանսավորումը, որը կազմում է ՀՆԱ-ի 2%-ը:
- Կրթության ցածր որակը:

Բովանդակային եւ կազմակերպչական խնդիրներ

- Հնացած, գերհագեցած, գերծանրաբեռնված կրթական ծրագրերը հմտություններ չեն ձեւավորում սովորողների մոտ:
- Բարդ, ակադեմիական լեզվով գրված դասագրքերը հաշվի չեն առնում սովորողների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները:
- Տնօրենների պատրաստման, վերապատրաստման ինստիտուտն ունի բարելավման կարիք:

Հայաստանյան հանրակրթական համակարգը հավասար հնարավորություններ չի ապահովում սովորողների համար՝ սահմանափակելով գյուղական համայնքներում ապրող, ինչպես նաեւ սոցիալապես խոցելի ընտանիքների երեխաների՝ կրթական ծառայություններից օգտվելու հնարավորությունների շրջանակը: Սովորողների կրթական ձեռքբերումների, ուսման առաջադիմության, ինչպես նաեւ մասնագիտական կողմնորոշման ու ԲՈՒՀ ընդունվելու հարցում էական ազդեցություն ունեն.

- Սովորողների ընտանիքների սոցիալ-տնտեսական կարգավիճակը:
- Ծնողների կրթվածության մակարդակը:
- Ընտանիքի բնակության վայրի աշխարհագրական տեղակայումը[7]:

Հատկանշական է, որ դպրոց չհաճախելու պատճառների շարքում առաջնայինը սոցիալ-տնտեսական վատթար վիճակն է[8]:

---

[6]Կրթության իրավունքի հասանելիության եւ հավասարության հիմնախնդիրները ՀՀ հանրակրթության ոլորտում, Երեւան, 2017 ԲՀՀ Հայաստան, http://www.osf.am/wp-content/uploads/2017/09/Educ_Equity_MainData_PPT.pdf, [30.03.2021]

[7] Նույն տեղում

[8]Երեխաների իրավունքների իրավիճակի վերլուծություն, Սեյվ դը Չիլդրեն Հայաստան, 2015թ, https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/book-eng.pdf [29.03.2021]

Հանրակրթական դպրոցներում անհավասարությունը դրսեւորվում է նաեւ դպրոցների նյութատեխնիկական հագեցվածության եւ շենքային պայմանների տարբեր մակարդակներով: Չնայած այն հանգամանքին, որ հանրակրթական դպրոցների շենքային եւ գույքային պայմանների վատթար վիճակը բնորոշ է թե՛ քաղաքային, թե՛ գյուղական դպրոցներին, այդուամենայնիվ, առավել խոցելի են գյուղական դպրոցները[9]:

Շենքային վատթար պայմանները բացասաբար են անդրադառնում նաեւ գյուղաբնակ երեխաների կրթական ձեռքբերումների վրա, սակայն դրանց բարելավումը ընդհանուր առմամբ էական ազդեցություն չունի գյուղական բնակավայրերում հանրակրթության որակի բարելավման վրա, քանի որ կրթության որակի բոլոր բաղադրիչները փոխկապակցված են եւ ներազդում են միմյանց վրա:

Հանրակրթության համակարգում առկա է նաեւ տվյալների հավաքագրման, տարածման, պահպանման, վերլուծության, ինչպես նաեւ դպրոցների ներքին եւ արտաքին գնահատման խնդիրներ: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը[10] հստակ սահմանում է դպրոցների ներքին եւ արտաքին գնահատման չափանիշերն ու իրականացման կարգը, սակայն այս ուղղությամբ աշխատանքները դեռեւս լիարժեք չեն իրականացվում. ներքին գնահատում իրականացնելիս դպրոցները մեթոդաբանական աջակցություն չեն ստանում, ինչպես նաեւ չի գործում այդ գործընթացի երկրորդ եւ որակի երաշխիք հանդիսացող բաղադրիչը՝ արտաքին գնահատումը:

ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հետազոտությունը նպատակ է ունեցել պարզել համավարակի ընթացքում կրթական քաղաքականության հասցեականությունն ու արդյունավետությունը, ինչպես նաեւ բացահայտել ներդրված աջակցության մեխանիզմների կայունությունը:

Համավարակի ընթացքում կրթական քաղաքականության արդյունավետությունը հասկանալու եւ ամբողջական պատկերացում կազմելու համար ներկայացնենք, թե որոնք են եղել հիմնական շահառուների՝ աշակերտների եւ ուսուցիչների կարիքները:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ մինչ համավարակը աշակերտներն ու ուսուցիչները ունեցել են համակարգչային հմտությունների պակաս, տեխնիկական ոչ բավարար միջոցներ, որոնք անհրաժեշտ են հատկապես առցանց դասընթացների արդյունավետ իրականացման համար[11]:

[9] ՀՀ հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական պայմանների մոնիթորինգի արդյունքների զեկույց, Երեւան, 2019թ. https://transparency.am/files/publications/1575983241-0-311692.pdf?v=4[29.03.2021]

[10] https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 [04.05.2021]

[11] ՀՀ պետական դպրոցներում ուսուցիչների կողմից ՏՀՏ կիրառության սոցիոլոգիական հետազոտություն, ԿՏԱԿ, Երեւան, 2018թ. , https://ktak.am/index.php/am/news/view/113 [12.04.2021]

Գծապատկեր 3. Համակարգչային հմտությունների տիրապետման ուսուցիչների ինքնագնահատումը (%) N=722



Հարցված ուսուցիչների 63%-ը մասնակցել է համակարգչային հմտությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումներին, մինչդեռ 37%-ը նման վերապատրաստումների չի մասնակցել: Հեռավար կրթության վերաբերյալ վերապատրաստման դասընթացներին մասնակցել է ուսուցիչների 57%-ը, չի մասնակցել՝ 43%-ը: Ուսուցիչների մեծ մասը մասնակցել եւ վարել է առցանց դասընթացներ:

Գծապատկեր 4. Ուսուցիչների մասնակցությունը առցանց դասընթացներին եւ դասավանդումը



Համավարակի ընթացքում ուսուցիչների մեծաքանակ վերապատրաստումներ են իրականացվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից, շուրջ 2000 ուսուցիչ է վերապատրաստվել, սակայն հետազոտությանը մասնակցած ուսուցիչների 34%-ը նշել է, որ դեռեւս ունի ՏՀՏ ոլորտի վերապատրաստումների կարիք:

Գծապատկեր 5. Առցանց դասընթացների արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ ուսուցիչների վերապատրաստման կարիքները (%)



Փորձագիտական գնահատականների համաձայն՝ 2020թ. ամառային արձակուրդների ընթացքում հարկավոր էր ավելի մեծ թվով վերապատրաստումներ իրականացնել ուսուցիչների համար եւ իրականացնել աշակերտների՝ առցանց կրթության գործիքների վերաբերյալ գիտելիքների բարելավմանն ուղղված իրազեկման աշխատանքներ: Չնայած աշակերտները համացանցից օգտվելու բազային գիտելիքներ ունեն, սակայն կրթական գործիքների տիրապետման տեսանկյունից բավարար չափով հմուտ չեն, ինչը ակնհայտ դարձավ առցանց դասերի ժամանակ:

Հայաստանում տնային տնտեսությունների 96%-ը ունի ինտերնետային կապ[12], սակայն հետազոտության մասնակիցները նշել են, որ համավարակի ընթացքում համացանցի որակը որոշ դեպքերում խոչընդոտել է առցանց կրթությանը: Հետազոտության մասնակից աշակերտների 91%-ը տնային պայմաններում ունեցել է համացանցին հասանելիություն: Համացանցի հասանելիությանն առնչվող մյուս խնդիրը կապված է համացանցի որակի, ինչպես նաեւ սակագնի հետ: Այս մասին են վկայում նաեւ ոլորտային մյուս հետազոտությունները[13]:

Աշակերտների հիմնական մասը առցանց դասերին մասնակցել է հեռախոսով՝ շուրջ 95%-ը, իսկ հեռախոսի համար համացանցի սակագները ոչ բոլոր աշակերտների համար են եղել մատչելի: Առցանց դասերին աշակերտների մասնակցության վրա ազդել է նաեւ տեխնիկական միջոցների պակասը:

[12] https://blogs.worldbank.org/hy/europeandcentralasia/interneti-ogtagorcowme-hayastanowm-depi-tvayin-mijotsneri-aveli-mec [13.04.2021]

[13] Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար/առցանց կրթության կազմակերպման եւ իրականացման վերաբերյալ առցանց հարցման ամփոփ արդյունքներ, http://escs.am/files/files/2020-07-08/7d2cd52ba1106d36cc35bdf5eaabc0ee.pdf [10.04.2021]

Գծապատկեր 6. Հեռավար դասերից աշակերտների բացակայության պատճառները



Աշակերտների 33.8%-ը նշել է, որ հեռավար դասերից բացակայել է համացանցի անհասանելիության, իսկ 21.7%-ը՝ տեխնիկական միջոցների բացակայության պատճառով՝ չնայած այն հանգամանքին, որ համավարակի ժամանակ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը փորձել է կարգավորել խնդիրը՝ կարիք ունեցող ընտանիքներին տրամադրելով տեխնիկական միջոցներ:

Ուսուցիչների հիմնական մասը ապահովված է եղել համացանցով եւ տեխնիկական միջոցներով՝ առցանց դասերի կազմակերպման համար հիմնականում օգտագործելով սեփական հեռախոսը:

Գծապատկեր 7. Արտակարգ դրության ժամանակ տեխնիկական միջոցների հասանելիություն, ուսուցիչներ, %, N=722



Առցանց դասերի հասանելիությունը բարձրացնելու նպատակով ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը համագործակցել է Հայաստանում գործող շարժական կապի օպերատորների հետ, ինչի արդյունքում վերջիններս համեմատաբար

մատչելի սակագներ են սահմանել դպրոցների համար՝ առցանց գործիքների եւ հարթակների կիրառման համար։

Ներդիր 1. Հայաստանում գործող 3 բջջային օպերատորների փաթեթները հեռավար ուսուցման կազմակերպման նպատակով

UCOM

Հայաստանի ողջ տարածքում Ucom-ի uMediaroom հավելվածի միջոցով հավելվածի հեռուստաալիքների ցանկում ավելացել են 12 հեռուստաալիքներ՝ յուրաքանչյուր դասարանի համար առանձին ալիք, որոնցով հեռարձակվում են ԿԳՄՍ նախարարության կողմից պատրաստվող հեռավար դասընթացները։ Առարկայի անվանումը եւ դասարանը նշված են տեսանյութի վերնագրում։ Դասերը հեռարձակվում են live ռեժիմով։ Ի դեպ, օգտվողները կարող են մինչեւ 3 օր ժամանակահատվածով օգտագործել Catch Up հնարավորությունը եւ դիտել հաղորդումներն իրենց հարմար ժամին։

Ucom շարժական հեռախոսակապի բոլոր բաժանորդները uMediaroom հավելվածի միջոցով տեսանյութեր դիտելիս չեն վճարում ծախսված ինտերնետ ծավալի համար, այսինքն կարող են դիտել հաղորդումներն անգամ եթե գտնվում են WiFi տիրույթից դուրս եւ միացված չեն շարժական ցանցին։

Ucom Universal եւ uMix փաթեթների բաժանորդները կարող են դիտել uMediaroom-ը առանց ամսավճարի, մյուս բոլոր՝ այդ թվում այլ օպերատորների բաժանորդները, կարող են ներբեռնել uMediaroom հավելվածը Google Play-ից եւ App Store-ից եւ մեկ ամիս դիտել ալիքներն անվճար։

Նույն տեսանյութերը տեղադրվում են նաեւ Ucom-ի uTV-ի տեսավարձույթի (VoD) «Հեռավար ուսուցում» բաժնում՝ դասակարգված ըստ դասարանի, ամսաթվի եւ առարկայի։

VivaMTS

««+Meeting» ծառայություն. «Zoom» եւ «Skype» հավելվածներով առցանց հանդիպումների հնարավորություն՝ «X», «Y» եւ «Z» սակագնային պլանների բաժանորդների համար։

Վիվա-ՄՏՍ-ը ներկայացնում է «+Meeting» ծառայությունը՝ նախատեսված «Zoom» եւ «Skype» հավելվածներով առցանց անցկացվող աշխատանքային հանդիպումների եւ դասերի, ինչպես նաեւ ընկերական շփումների համար։

Ի պատասխան Zoom եւ Skype հավելվածների օգտագործման մեծ պահանջարկի՝ Վիվա-ՄՏՍ-ը հոգ է տարել, որպեսզի այս դժվարին շրջանում աշակերտները, ուսանողները, նրանց ուսուցիչներն ու դասախոսները ու բոլոր նրանք, ում անհրաժեշտ է հեռավար շփում, «+Meeting» ծառայության միջոցով անսահմանափակ ու առանց հավելյալ վճարի հասանելիություն ունենան այս կարեւոր բջջային հավելվածներին՝ մինչեւ 31.05.2020թ. ներառյալ՝ համապատասխան սակագնային պլանի ակտիվ լինելու դեպքում։

Ծառայությունը ներկայում հասանելի է եւ ավտոմատ ակտիվացված է Վիվա-ՄՏՍ-ի «X» եւ «Y» կանխավճարային եւ հետվճարային, ինչպես նաեւ «Z» կանխավճարային սակագնային պլանների բաժանորդների համար։

«X», «Y» ու «Z» սակագնային պլանների շրջանակներում Zoom, Skype, ինչպես նաեւ՝ Viber, Whatsapp, Messenger, Zangi, Telegram («X» ու «Y» սակագնային պլանների դեպքում նաեւ՝ Facebook, Instagram, Snapchat, «X» սակագնային պլանի դեպքում նաեւ՝ Netflix) հավելվածներից օգտվելիս հիմնական ինտերնետ փաթեթի մեգաբայթերը չեն օգտագործվում՝ սակագնային պլանի ակտիվ լինելու դեպքում։

Փաթեթների ակտիվացման գները.

«Z» սակագնային պլան՝ 1800 դրամ/30 օր:
«Y» սակագնային պլան՝ 2800 դրամ/30 օր:
«X» սակագնային պլան՝ 5000 դրամ/30 օր:

«Մինչեւ 2020թ. մայիսի 31-ը ներառյալ՝ «+Meeting» ծառայության միջոցով Zoom Skype հավելվածներն օգտագործելիս սակագնային պլանների շրջանակում տրամադրվող ինտերնետ-փաթեթի մեգաբայթերը չեն սպառվում»,-նշված է բջջային օպերատորի հայտարարության մեջ:

Beeline
2020թ. մարտի 29-ից սկսած՝ ԿԳՄՄՆ-ի պատրաստած դասընթացների բոլոր տեսանյութերը հասանելի կլինեն BeeTV հավելվածի «Տեսադարան» բաժնում:
Բացի այդ, նույն հարթակի միջոցով աշակերտներին կներկայացվի նաեւ Հանրային հեռուստատեսության, Наука 2.0, Discovery Science, Da Vinci Learning հեռուստաալիքների հեռարձակումը catch-up հնարավորությամբ, որպեսզի երեխաները կարողանան դիտել տեսանյութերը եւ ուսուցողական հեռուստաալիքները ցանկացած ժամի:

Դասընթացների բոլոր տեսանյութերից օգտվելու համար անհրաժեշտ է բեռնել BeeTV բջջային հավելվածը Android կամ iOS համակարգերի համար, լրացնել բջջային հեռախոսահամարը «Մուտքանուն» բաժնում 0XX-XXX-XXX ֆորմատով եւ 2020 կոդը՝ «Գաղտնաբառ» բաժնում: Հավելվածից կարող են օգտվել ցանկացած օպերատորի բաժանորդները:

BeeTV գործող բաժանորդների համար դասընթացները հասանելի կլինեն «Տեսադարան» բաժնում առանց լրացուցիչ գրանցման: Beeline բաժանորդները, անկախ սակագնային փաթեթից, կարող են օգտվել հավելվածից առանց բջջային ինտերնետի սպառման»[14]:

Ուսուցիչների մեծ մասը դրական է գնահատել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ձեռնարկած քայլերը՝ ուղղված արտակարգ դրության ժամանակ կրթության կազմակերպմանը:

Գծապատկեր 8. Կրթական քաղաքականության արդյունավետության գնահատումը, %, ուսուցիչներ, N=722



Ուսուցիչների հիմնական դժգոհությունը եւ բացասական գնահատականը կապված է 2020թ. ապրիլի 27-ին ընդունված որոշման հետ[15], որով աշակերտների երկրորդ կիսամյակային եւ տարեկան գնահատականները ձեւավորվել են մինչ 2020թ. մարտի 13-ը էլեկտրոնային

մատյաններում առկա գնահատականների հիման վրա, մինչդեռ ուսուցիչների ճնշող մեծամասնությունը գնահատել է աշակերտներին առցանց դասերի ժամանակ: Փորձագիտական համայնքի կարծիքով այս քայլը նպաստեց առցանց դասերի մասնակցության անկմանը:

Գծապատկեր 9. Կրթական քաղաքականության արդյունավետության գնահատումը, %, ուսուցիչներ, N=722



Հեռավար դասերի հետ կապված մյուս կարեւոր խնդիրը կապված է աշակերտների մասնակցայնության հետ: Փորձագիտական գնահատականների համաձայն՝ աշակերտների 80%-ն է մասնակցել առցանց դասերին, ընդորում՝ հիմնականում հեռախոսներով: Հետաքրքրական է, որ հետազոտությանը մասնակից աշակերտների շուրջ 95.5%-ն է նշել, որ մասնակցել է առցանց դասերին, իսկ ծնողների կարծիքների համաձայն՝ երեխաների մասնակցությունը կազմել է շուրջ 94%:

Առցանց դասերին չմասնակցած աշակերտների հիմնական մասը ավագ դպրոցի աշակերտներ են: Հարցմանը մասնակցած աշակերտների (N=793) պատասխանները հեռավար դասերից բացակայության պատճառների վերաբերյալ տարբերվում են դասերին չմասնակցած կամ շատ քիչ մասնակցած աշակերտների պատասխաններից: Հարցմանը մասնակցած աշակերտների 34%-ը որպես առցանց դասերին չմասնակցելու հիմնական պատճառ նշել է համացանցի անհասանելիությունը, մինչդեռ, դասերից շատ բացակայող եւ ընդհանրապես չմասնակցած աշակերտների 42%-ը նշել է ցանկության բացակայությունը:

[14] https://iravaban.net/266209.html [14.04.2021]

[15] https://escs.am/am/news/6310

Գծապատկեր 10. Դասերին չմասնակցելու պատճառները, աշակերտներ, (%)



Ցանկության բացակայությունն իր հերթին պայմանավորված է եղել հեռավար կրթության անարդյունավետությամբ: Առցանց դասերին աշակերտների մասնակցության վրա ազդող կարեւոր գործոն է հանդիսացել նաեւ հեռավար կրթության հետ կապված աշակերտների զգացողություններն ու հոգեբանական վիճակը:

Գծապատկեր 11. Աշակերտների զգացողությունները դպրոցում եւ հեռավար դասերի անցնելու հետ կապված, աշակերտներ, % նշումներից



Հեռավար դասերին չմասնակցած կամ շատ քիչ մասնակցած աշակերտների 30%-ի մոտ նկատվել է անհանգստություն եւ տագնապ, մինչդեռ նույն աշակերտների 4%-ն է ունեցել անհանգստության զգացողություն դպրոց հաճախելիս: Իսկ ուրախության եւ ոգեւորության զգացողություններ ունեցել են հիմնականում հեռավար դասերին չմասնակցած այն աշակերտները, ովքեր նշել են, որ սովորաբար հաճույքով չեն դպրոց հաճախել, այսինքն հեռավար կրթությունը նրանց համար հնարավորություն էր բացակայության համար (այս աշակերտները կազմում են հեռավար դասերին չմասնակցած աշակերտների ընդամենը 20%-ը):

Գծապատկեր 12. Հեռավար դասերին աշակերտների մասնակցության հաճախականությունը, %, N=867



Առցանց դասերի արդյունավետության վերաբերյալ հետազոտությանը մասնակցած ուսուցիչների, աշակերտների եւ ծնողների կարծիքները տրամագծորեն տարբերվում են իրարից. հետազոտության մասնակիցների եւ փորձագետների մի մասի կարծիքով առցանց դասերը արդյունավետ էին, իսկ մի մասը նշել է, որ այդ դասերը բացարձակ արդյունավետ չեն եղել: Արդյունքները առավել մանրամասն ներկայացված են գծապատկեր 14-ում:

Գծապատկեր 13. Առցանց դասերի արդյունավետությունը



«Պետք է նոր իրավիճակը օգտագործվեր, որպեսզի նորարարություններ կիրառվեին, ճգնաժամը պետք է որպես շանս օգտագործվեր: Հին ձեւերով հնարավոր չէ նոր իրավիճակում գործել, անընդհատ պետք է քննադական մտածողություն, պետք է վերանայել շատ բաներ, մեզ մոտ շատ անգամ, պարզապես էկրանի առաջ արվել է այն, ինչը արվել է դասարանում, ինչը նպատակահարմար չի»:

Փորձագիտական հարցազրույցից հատված

Հետաքրքրական է կրթության արդյունավետության եւ իրենց կողմից վարած առցանց դասերի որակի վերաբերյալ ուսուցիչների գնահատականը: Առցանց կրթության ընդհանուր արդյունավետության համեմատ՝ ուսուցիչներն իրենց կողմից վարած դասընթացները առավել արդյունավետ են համարում:

Գծապատկեր 14. Առցանց դասերի արդյունավետությունը ուսուցիչների կարծիքով



Համավարակի ընթացքում կայուն մեխանիզմների ներդրման գործընթացը գնահատելու նպատակով հետազոտության շրջանակներում փորձ է արվել առանձնացնել եւ խմբավորել կրթական համակարգի վրա համավարակի թողած դրական եւ բացասական ազդեցությունները:

Դրական ազդեցության օրինակներ

1. **Ճգնաժամային կառավարման փորձառության ձեռք բերում**

- Կրթական համակարգը ստիպված եղավ արագ արձագանքել խնդիրներին, ռեսուրսների մոբիլիզացիա իրականացնել, անցնել ճգնաժամային կառավարման:
- Համավարակի հետեւանքով փորձարկվեց հեռավար կրթությունը:

«Ոնց որ լակմուսի թուղթ լիներ հեռավարը: Ինքը ցույց տվեց այն, ինչ մենք գիտեինք, բայց չէինք ընդունում: Մեկ էլ հանկարծ տեսնում ես, որ չէ, չես կարողանում երկրորդ քայլը անես»:

Փորձագիտական հարցազրույցից հատված

2. **Ենթակառուցվածքների ձեւավորում**

- Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնում ձեւավորվեց հեռավար ուսուցման կենտրոն՝ քառասուն հոգանոց թիմով, որը զբաղվում էր կենտրոնացված հեռավար կրթության իրականացմամբ: Այժմ մշակվում են հեռավար կրթության որակի ապահովման մեխանիզմները, որոնք կգնահատեն e-school Armenia նախագծի հեռավար աշխատանքը, ինչպես նաեւ ԿՏԱԿ-ի մյուս բոլոր միջամտությունների որակը:
- Կենտրոնացված, հեռավար դպրոց ստեղծվեց, որտեղ գրանցվեց մոտավորապես 4500 աշակերտ:
- Որոշ թվով աշակերտներ ապահովվեցին համակարգչով:
- Ակտիվացան մի շարք կրթական հարթակներ՝ armedu.am, e-school Armenia:

- Գործարկվեցին էլեկտրոնային մատյանները, օրագրերը:

3. **Կրթական ռեսուրսների մշակում, զարգացում, տարածում**

- Տեսադասերի նկարահանում, արխիվացում. Ստեղծվեցին շուրջ 650 տեսադասեր, որոնք էլեկտրոնային տարբերակով հասանելի են e-school-ում, դրանցից շուրջ 140-ը սուրդո թարգմանված տեսադասեր են, տեսադասերն ունեն շուրջ 250 000 դիտում:
- Առաջին դասարանցիների համար ստեղծվեցին 2 տիկնիկներ՝ Կարդալիկուսը եւ Մաթեմատիկուսը:
- Մշակվեցին մեթոդական ուղեցույցեր:

4. **Կարողությունների զարգացում**

- Իրականացվեցին ուսուցիչների մեծաքանակ վերապատրաստումներ, շուրջ 2000 ուսուցիչ է վերապատրաստվել:
- Teams-ի համայնքում գրանցվեց շուրջ 7000 ուսուցիչ:
- Ուսուցիչների շրջանում զարգացան առցանց գործիքների կիրառման, նոր մեթոդներով աշխատելու, արագ սովորելու, դասավանդման պրոցեսում ստեղծագործական մոտեցումներ ցուցաբերելու հմտությունները:

> «Ահագին բան սովորեցին ուսուցիչները, փորձով կիսվեցին իրար հետ, մի քիչ սթրեսի ենթարկվեցին՝ լավ իմաստով, որովհետեւ կոմֆորտ զոնայից դուրս եկան»:
>
> **Փորձագիտական հարցազրույցից հատված**

5. **Պետություն-մասնավոր հատված-դոնոր համայնք համագործակցության զարգացում**

- Շարժական կապի օպերատորների սակագնային քաղաքականությունը փոփոխվեց, առցանց դասերի հասանելիության ապահովման նպատակով մատչելի սակագներ սահմանվեցին:
- ԱԺ պատգամավորները համակարգչային տեխնիկա տրամադրեցին աշակերտներին:
- Մասնավոր կազմակերպությունների, այդ թվում՝ առեւտրային բանկերի կողմից իրականացվեցին համակարգիչների նվիրատվություններ:
- SS կազմակերպությունները հատուկ հեռախոսների համար հարմարեցված հավելվածներ մշակեցին:

6. **Իրավական կարգավորում**

- Հաստատվեցին պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման եւ ուղղորդման մեխանիզմները, կարգը[16]:
- Հաստատվեց հեռավար կրթության կարգը[17]:

[16] https://cutt.ly/KbMlPZH
[17] http://escs.am/files/files/2020-04-30/39890fcbf222c499143c668fe2d436ae.pdf

7. **Ուսուցիչ-ծնող համագործակցության սերտացում**

- Ծնողները սկսեցին ավելի ակտիվորեն մասնակցել իրենց երեխայի կրթության գործընթացին։
- Ծնողները հաղորդակից եղան ուսուցիչների աշխատանքին, ինչը նաեւ նպաստեց նրան, որ ծնողները սկսեցին ավելի արժեւորել ուսուցիչների աշխատանքը։

8. **Ուսուցչական համայնքի համագործակցություն, փոխօգնություն**

- Վիրտուալ տիրույթում ուսուցչական տարբեր խմբեր ձեւավորվեցին։
- Ուսուցիչները սկսեցին գիտակցել ընդհանուր շահերը եւ բարձրաձայնել դրանց մասին։

«Նախորդ տասը տարիներին ուսուցիչները այդքան բան չէին սովորել, ինչքան անցած տարի։ Ի նկատի ունեմ հիմնականում համակարգչային գիտելիքներ, թվային գործիքների, հարթակների օգտագործում, փորձի փոխանակում։ Այս առումով շատ դրական ազդեցություն ունեցավ COVID-ը, որովհետեւ ուսուցիչները իրարից ահագին բան սովորեցին, ահագին բարձրացրեցին իրենց թվային գրագիտության մակարդակը, ինչ-որ բաներ ստեղծեցին՝ էլեկտրոնային նյութեր, վիդեոներ, ինչ-որ գործիքներ հայտնաբերեցին, ինչ-որ կայքեր, վերապատրաստումներ անցան տարբեր»։

Փորձագիտական հարցազրույցից հատված

9. **Դասապրոցեսը առավել արդյունավետ եւ ներառական դարձնելու հնարավորության ստեղծում**

- Առցանց դասերը արխիվացնելու հնարավորություն ստեղծվեց։
- Զուգահեռաբար աշակերտներին հանձնարարություն տալու եւ ստուգելու հնարավորություն ստեղծվեց։
- Գյուղական դպրոցներում լիարժեք դասապրոցես իրականացնելու հնարավորություն ստեղծվեց՝ չնայած ուսուցչի ֆիզիկական բացակայությանը։

Ներդիր 2. Հատված պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման եւ ուղղորդման կարգից

Պարտադիր կրթությունից դուրս մնացած են համարվում 6-18 տարեկան՝

1) հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) չհաճախած եւ (կամ) որեւէ ուսումնական հաստատությունում երբեւէ չհաշվառված երեխաները.

2) որեւէ ուսումնական հաստատությունում հաշվառված, սակայն վեց աշխատանքային օր անընդմեջ կամ ամսվա մեջ ավելի քան 10 օր չհաճախած (չհաճախող) երեխաները.

3) հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա նախնական (մասնագիտական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում սովորած եւ տվյալ ուսումնական հաստատությունից դուրս մնացած մինչեւ 18 տարեկան երեխաները. ուսումնական հաստատություն հաճախած, սակայն ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի (արտերկիր մեկնելու նպատակով) հետեւանքով ուսումն անավարտ թողած երեխաները.

5) այն երեխաները, որոնք հաշվառված են տնային ուսուցման համակարգում, սակայն ՀՀ կրթության տեսչական մարմնի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ տնային ուսուցում չի իրականացվում[18]:

Բացասական ազդեցության օրինակներ

Կրթության իրավունքի իրացման անհնարինություն

- Աշակերտների 20%-ը՝ շուրջ 23,000 երեխա, դուրս մնաց հանրակրթությունից:
- Կրթական ծրագիրը ամբողջապես չիրականացվեցին հեռավար կրթության ժամանակ, իսկ որոշ առարկաների ծրագրեր թերի են իրականացվել՝ ֆիզկուլտուրա, տեխնոլոգիա, արվեստներ:

Անհատական ինֆորմացիայի պաշտպանվածության հետ կապված խնդիրներ

- Առցանց դասերի ընթացքում անտեսվեց աշակերտների անհատական տվյալների պաշտպանվածությունը:

Ուսուցիչների՝ համակարգչային եւ առցանց եղանակով դասապրոցեսը իրականացելու մեթոդական հմտությունների փորձարկում

- Մեթոդական առումով ուսուցիչների մեծ մասը պատրաստ չէր հեռավար կրթությանը:
- Հեռավար կրթության ժամանակ ուսուցիչը կորցնում էր աշակերտների հանդեպ վերահսկողությունը:

«Այստեղ ամենամեծ խնդիրն այն է, որ շատ հաճախ մեխանիկական ձեւով այն, ինչ անում էին դասարանում, սկսեցին անել Zoom-ի էկրանի առաջ, իսկ դա անթույլատրելի է»:

Փորձագիտական հարցազրույցից հատված

Առցանց կրթության մոնիտորինգի եւ գնահատման համակարգի բացակայություն

- Դպրոցների վարչական կազմը չկարողացավ լիարժեքորեն վերահսկել դասապրոցեսը՝ հատկապես համավարակի սկզբնական փուլում:

«Առցանց դասերի իրականացման սկզբնական շրջանում վերահսկելու եւ մոնիտորինգ անց կացնելու հնարավորություն (գործիք) չկար: Երբ տրամադրվեցին տնօրենների եւ փոխտնօրենների անձնական օգտանուններնն ու գաղտնաբառերը, հսկողությունը եւ արդյունքների գնահատումը իրականացվել է ամենօրյա ռեժիմով»:

Փորձագիտական հարցազրույցից հատված

[18] https://cutt.ly/NbMl5PY

- Սկզբնական փուլում կրթական քաղաքականություն մշակողները եւս ամբողջությամբ չէին վերահսկում հեռավար ուսուցման գործընթացը:

Ընտանիքի անվերահսկելի եւ անմիջական ազդեցությունը երեխաների ուսուցման գործընթացի վրա

- Աշակերտները տնից էին դասապրոցեսին մասնակցում եւ կրում էին ընտանիքի անմիջական ազդեցությունը:

«Առցանց դասերին մասնակցել են դպրոցի բոլոր աշակերտները, սակայն շուրջ 80 աշակերտ, չունենալով մշտական կապի միջոց, սարքավորումներ, ոմանք էլ՝ բազմանդամ ընտանիքի անդամներ լինելով եւ միակ սարքավորման պատճառով, չեն մասնակցել զուգահեռ ընթացող դասերին»:

Հատված դպրոցի տնօրենին ուղղված գրավոր հարցումից

- Հեռավար դասերի ռեժիմն ու ծնողների աշխատանքային ծանրաբեռնվածությունը իրար հաճախ խանգարում էին:

Ֆիզիկական շփման բացակայություն

- Երեխաները տեւական ժամանակ զրկվեցին իրար հետ շփվելու հնարավորությունից:

«Առաջարկը մեկն է, որ հանեն հեռավար կրթությունը, որովհետեւ այն արդյունք չի ապահովում, ես ընդհանրապես գոհ չեմ հեռավար ուսուցումից: Գուցե մանկավարժը շատ լավը լինի, բայց երեխան այնքանով ներգրավված չի լինում, ինչքան որ պետք է: Երեխան դպրոց հաճախելով շփվում է իր հասակակիցների հետ, կոնտակտ է հաստատում, շփվում է: Հիմա երեխան ագրեսիվ է դարձել, չի շփվում, նախասիրություններ չունի: Բացասական փոփոխություններ կան»:

Հատված ծնողի հետ հարցազրույցից

Սոցիալական լարվածության սրում

- Ուսուցիչների եւ աշակերտների մի մասը ապահովված չեն տեխնիկական միջոցներով:

Աշակերտների անձնային որակների փորձարկում

- Աշակերտների մեծ մասը ինքնուրույն աշխատելու կարողություն չուներ հեռավար կրթության ժամանակ:

«Հեռավարի դեպքում շատ բան կախված էր երեխաների ինքնուրույն աշխատելու կարողությունից, իսկ մենք գիտենք, որ մեր երեխաները այդքան էլ ինքնուրույն չեն, եթե թողնես, երեխաների 80%-ը բան չի անի»:

Փորձագիտական հարցազրույցից հատված

Կրթական համակարգում սոցիալական արդարության, հավասարության, մասնակցայնության սկզբունքի խախտում

- Համաձայն փորձագիտական կարծիքների՝ կարեւոր էր, որ մասնակցայնություն ապահովվեր ամբողջ կրթական համակարգի շահառուների մակարդակով, ինչը տեղի չունեցավ:

«Ուսուցիչների համակարգչային հմտությունների մասով ամենամեծ պրոբլեմը, որ կուզենամ նշել, այն է, որ անհամաչափ է, այսինքն մի մասի մոտ լավ է, բայց մեծ մասի մոտ վատ է: Ուժեղները ավելի ուժեղանում են, թույլերը չեն ուժեղանում: Սա մեր պրոբլեմն է»:

Փորձագիտական հարցազրույցից հատված

ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հետազոտության խնդիրներից է համավարակի ընթացքում հեռավար դասերի որակի եւ հասանելիության ուսումնասիրումը:

Միջազգային բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ համավարակի ընթացքում հեռավար ուսուցման որակի եւ հասանելիության վրա անմիջական ազդեցություն են ունեցել համացանցի եւ տեխնիկական միջոցների հասանելիությունը[19], ուսուցիչների կարողությունները եւ առցանց կրթական գործիքների վերաբերյալ վերապատրաստումները[20]:

Ուսուցիչների հիմնական մասը ապահովված է եղել սեփական համակարգչով, ընդորում դրանց տոկոսային բաշխվածությունը ըստ մարզերի տատանվել է: Այսպես՝ համակարգչով առավելապես ապահովված են եղել Կոտայքի, Երեւանի, Արարատի, Լոռու մարզերի ուսուցիչները: Տեխնիկական միջոցների համեմատաբար բարձր կարիք են ունեցել Արագածոտնի, Գեղարքունիքի մարզերի ուսուցիչները:

[19] HOW MANY CHILDREN AND YOUNG PEOPLE HAVE INTERNET ACCESS AT HOME? Estimating digital connectivity during the COVID-19 pandemic, https://data.unicef.org/resources/children-and-young-people-internet-access-at-home-during-covid19/ [15.04.2021]

[20] WHAT HAVE WE LEARNT? Overview of findings from a survey of ministries of education on national responses to COVID-19, https://data.unicef.org/resources/national-education-responses-to-covid19/[15.04.2021]

Գծապատկեր 15. Ուսուցիչների ապահովվածությունը համակարգչով



Սակայն հատկանշական է, որ ուսուցիչների համակարգչով ապահովված լինելու հանգամանքը չի անդրադարձել առցանց դասերին աշակերտների մասնակցության ցուցանիշի վրա:

Գծապատկեր 16. Մարզերում առցանց դասերին աշակերտների մասնակցության գնահատումը ուսուցիչների կողմից (%)



Ուսուցիչները գնահատել են նաեւ առցանց դասերին աշակերտների մասնակցության ակտիվությունը: 41%-ը է նշել, որ դասարանների աշակերտների հիմնական մասը ակտիվ մասնակցել է առցանց դասերին, 34 %-ը նշել է, որ դասարանների աշակերտների կեսն է ակտիվ մասնակցել դասերին, իսկ 19%-ի կարծիքով՝ դասարանների աշակերտների փոքր մասն է ակտիվ մասնակցել դասերին:

Գծապատկեր 17. Առցանց դասերին աշակերտների մասնակցության ակտիվության գնահատումը ուսուցիչների կողմից (%)



Ծնողների մոտ 69%-ը նշել է, որ իրենց երեխաները ակտիվ մասնակցել են առցանց դասերին:

Գծապատկեր 18. Առցանց դասերին աշակերտների մասնակցության ակտիվության գնահատումը ծնողների կողմից (%), N=790



Հետաքրքրական է, որ չնայած եւ՛ ծնողները, եւ՛ ուսուցիչներն ու աշակերտները նշել են, որ աշակերտների հիմնական մասը մասնակցել է առցանց դասերին, սակայն առցանց կրթության հիմնախնդիրների շարքում ուսուցիչները առանձնացրել են աշակերտների ցածր մասնակցությունը:

Գծապատկեր 19. Առցանց ուսուցման հետ կապված խնդիրները ուսուցիչների կարծիքով



Հետազոտության մասնակից դպրոցների տնօրեններին ուղղված գրավոր հարցման պատասխաններում եւս առցանց կրթության հիմնախնդիրների եւ մտահոգությունների շարքում նշվել է աշակերտների մասնակցության խնդիրը:

Գծապատկեր 20. Առցանց ուսուցման հետ կապված խնդիրները դպրոցի տնօրենների կարծիքով



Խոսքը ոչ թե առցանց դասերին աշակերտների ֆիզիկական մասնակցության փաստին է վերաբերում, ինչը հնարավոր է եղել վերահսկել առցանց տիրույթում աշակերտների փաստացի գրանցումներով, այլ դասապրոցեսին աշակերտների ներգրավման հիմնախնդրին: Առցանց դասերին աշակերտների մասնակցությունը հաճախ կրել է ֆորմալ բնույթ եւ հնարավորություն չի տվել նրանց լիարժեքորեն ներգրավված լինել դասապրոցեսին, ստանալ համապատասխան գիտելիքներ եւ կարողություններ:

Հետազոտության ընթացքում փորձ է արվել ուսումնասիրել նաեւ առցանց դասերին աշակերտների մասնակցության որակական պատկերը:

Գծապատկեր 21. Առցանց դասերի կազմակերպման որակի գնահատումը աշակերտների կողմից (%), N=823



Աշակերտները առավել բարձր են գնահատել դասավանդման նյութերի հասանելիությունը եւ առավել ցածր՝ հեռավար դասերի ժամանակ ուսուցիչների կողմից աշակերտների նկատմամբ անհատական մոտեցում կիրառելու հնարավորությունը: Առցանց դասերի ժամանակ անհատական մոտեցման բացակայության մասին են վկայում նաեւ ծնողների գնահատականները:

> «Այս հեռավար կրթությունը երեխաներին կրթությամբ չի ապահովում, այլ քայլ առ քայլ տանում է դեպի բթացման, այն երեխային ոչինչ չի տալիս, նա ոչինչ չի ընկալում: Ուսուցիչը հեռավարի ընթացքում անհատական ուշադրություն չի դարձնում երեխային: Օրինակ, 1-ին, 2-րդ դասարաններ հաճախող երեխան պետք է անհատական մոտեցմամբ եւ եզակի ուշադրությամբ սովորի տառերը, նրանց գրելաձեւը, որը հեռավարի ընթացքում անհնար է իրականացնել»:
>
> **Հատված ծնողի հետ հարցազրույցից**

Ուսուցիչների հիմնական մասը առցանց դասերին նախապատրաստվել է, ընդորում առաջնահերթորեն հիմք է ընդունվել դասապլանը:

Գծապատկեր 22. Առցանց դասերին ուսուցիչների նախապատրաստման մեթոդները



Ուսուցիչները նշել են, որ հիմնականում բանավոր ներկայացմամբ, հարց ու պատասխանով են ներկայացրել նոր դասը, իսկ տեսանյութերի կիրառմամբ նոր դասը ներկայացրել է հետազոտության մասնակից ուսուցիչների միայն 4%-ը:

Գծապատկեր 23. Առցանց ձեւաչափով ուսուցիչների կողմից նոր դասի ներկայացման մեթոդները



Դասի ամրապնդման համար եւս կիրառվել է հիմնականում հարց ու պատասխանի մեթոդը, նոր դասի ներկայացման հաջորդ գերակշռող մոտեցումը եղել է տնային հանձնարարությունների տրամադրումը:

Գծապատկեր 24. Առցանց դասերի ժամանակ հին դասի ամրապնդման մեթոդները



Ուսուցիչների 95%-ը նշել է, որ գնահատել է աշակերտներին առցանց դասերի ժամանակ:

Մյուս կարեւոր հիմնախնդիրը, որին անդրադարձ է կատարվել հետազոտության շրջանակներում, առնչվում է ըստ առարկաների առցանց դասերի արդյունավետության աստիճանի գնահատմանը:

Գծապատկեր 25. Ըստ առարկաների՝ առցանց դասերի արդյունավետության գնահատումը աշակերտների կողմից



Ընդհանուր առմամբ աշակերտները՝ ի համեմատ ծնողների, ավելի բարձր են գնահատել առցանց դասերի արդյունավետությունը: Ի տարբերություն բնագիտական առարկաների՝

հումանիտար առարկաների առցանց մատուցումը աշակերտներն ու ծնողները ավելի արդյունավետ են համարել:
Հետազոտության մասնակիցները նշել են, որ առցանց դասերի արդյունավետության վրա էական ազդեցություն է ունեցել ծնողների ցուցաբերած հետեւողականությունը:

Ծնողների ճնշող մեծամասնությունը՝ 94%-ը, նշել է, որ իր երեխան/երեխաները մասնակցել է/են առցանց դասերին, ընդ որում, հարցվածների 71,4%-ի կարծիքով դպրոցը փորձել է աջակցել առցանց դասերին երեխաների ներգրավվմանը:

Գծապատկեր 26. Ծնողների տրամադրած ժամանակը երեխաների դասապատրաստմանը՝ մինչ արտակարգ դրությունը եւ արտակարգ դրության ժամանակ (%) N=800



Արտակարգ դրության պայմաններում ծնողների մի մասը՝ 36,3%-ը, երեխաների դասապատրաստմանը տրամադրել է 4 ժամ եւ ավել, մինչդեռ նախքան համավարակը ավելի քիչ թվով ծնողներ են նույնքան ժամանակ (4 ժամ եւ ավել) հատկացրել դասապատրաստմանը: Այսինքն դասապատրաստումը համավարակի պայմաններում ավելի շատ ժամանակ է պահանջել ծնողներից:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է նաեւ կրթությունից դուրս մնացած երեխաների հիմնախնդիրը: Ուսուցիչների 61%-ը նշել է, որ իրենց կողմից դասավանդվող դասարաններում կրթության առանձնահատուկ կարիք ունեցող աշակերտներ չեն եղել, եւ միայն 39%-ն է հավաստել նման աշակերտների առկայության մասին, ընդորում՝ 57%-ի կարծիքով այդ աշակերտները ներգրավված են եղել առցանց դասերին:

Փորձագիտական համայնքի գնահատմամբ՝ առցանց դասերից դուրս են մնացել հիմնականում բազմազավակ, սոցիալապես խոցելի ընտանիքների երեխաները: Կրթությունից դուրս մնացած երեխաների ծնողների հետ հարցազրույցները եւս ցույց են տալիս, որ առցանց դասերին երեխաների ներգրավվածության վրա ազդել են ծնողների զբաղվածությունը, բնակարանային ոչ բարենպաստ պայմանները, տեխնիկական միջոցների անհասանելիությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության արդյունքների համադրումը հնարավորություն տվեց կատարել հետեւյալ եզրահանգումները՝

- Մինչ համավարակը աշակերտների եւ ուսուցիչների շրջանում արձանագրվել է համակարգչային հմտությունների պակաս, տեխնիկական միջոցների ոչ բավարար ապահովվածություն, ինչը բացասաբար է անդրադարձել առցանց դասերի արդյունավետության վրա:

- Հետազոտությանը մասնակից ուսուցիչների մեծ մասը մասնակցել է համակարգչային հմտությունների զարգացմանն ուղղված եւ հեռավար կրթության վերաբերյալ վերապատրաստումներին:

- Ուսուցիչների հիմնական մասը ապահովված է եղել համացանցով եւ տեխնիկական միջոցներով՝ առցանց դասերի կազմակերպման համար հիմնականում կիրառելով սմարթ հեռախոսները:

- Ուսուցիչների հիմնական մասը ունի ՏՀՏ ոլորտի վերապատրաստումների, այդ թվում՝ էլեկտրոնային կառավարման գործիքների կրթության կամ ուսուցման կարիք:

- Ուսուցիչների մեծ մասը դրական է գնահատում արտակարգ դրության ժամանակ առցանց կրթության կազմակերպմանն ուղղված ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ձեռնարկած քայլերը, որոնք ուղղված են եղել ուսուցիչների եւ աշակերտների կրթական կարիքների աջակցմանը, խնդիրներին արագ արձագանքմանը:

- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ձեռնարկած քայլերի վերաբերյալ ուսուցիչների հիմնական դժգոհությունը ու բացասական գնահատականը կապված է 2020թ. ապրիլի 27-ին ընդունված որոշման հետ, որով աշակերտների կիսամյակային գնահատականները ձեւավորվեցին մինչ 2020թ. մարտի 13-ն ընկած ժամանակահատվածում արձանագրված ցուցանիշների հիման վրա, մինչդեռ հեռավար դասերի ընթացքում ձեռք բերված գնահատականները հաշվի չառնվեցին:

- Ի համեմատ համավարակի ժամանակ իրականացված առցանց կրթության՝ ուսուցիչներն իրենց կողմից վարած առցանց դասընթացները ավելի արդյունավետ են համարում:

- Աշակերտների հիմնական մասը՝ շուրջ 90%-ը, մասնակցել է առցանց դասերին, իսկ չմասնակցելու հիմնական պատճառ հանդիսացել է համացանցի անհասանելիությունն ու ցանկության բացակայությունը:

- Աշակերտները առցանց հարթակում առկա նորարարական կրթական գործիքներից արդյունավետ օգտվելու հմտությունների պակաս ունեն:

- Աշակերտների հիմնական մասը՝ 95%-ը առցանց դասերին մասնակցել է հեռախոսով, սակայն համացանցի սակագները ոչ բոլոր աշակերտների համար են եղել մատչելի: Առցանց դասերին աշակերտների մասնակցության վրա ազդել է նաեւ տեխնիկական միջոցների պակասը:

- Հեռավար կրթության անցումը աշակերտների մոտ ի հայտ է բերել մի շարք սոցիալ-հոգեբանական խնդիրներ, որոնց մինչեւ այժմ պատշաճ ուշադրություն չի դարձվել: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ աշակերտների մեծ մասի մոտ գերակշռել է անհանգստության զգացումը: Հեռավար դասերին չմասնակցած կամ շատ քիչ մասնակցած աշակերտների մի մասը նշել է, որ անհանգստություն եւ տագնապ է զգացել մինչդեռ նույն աշակերտների շատ փոքր մասն է անհանգստության զգացողություն ունեցել դպրոց հաճախելիս: Իսկ ուրախության եւ ոգեւորության զգացողություն ունեցել են հիմնականում հեռավար դասերին չմասնակցած այն աշակերտները, ովքեր նշել են, որ սովորաբար հաճույքով չեն դպրոց գնում, այսինքն հեռավար կրթությունը դասերից բացակայելու հնարավորություն էր նրանց ընձեռել:

Կրթական համակարգի վրա համավարակի թողած դրական հետեւանքներն են.

- Ճգնաժամային կառավարման փորձառության ձեռք բերում:
- Ենթակառուցվածքների ձեւավորում:
- Կրթական ռեսուրսների մշակում, զարգացում, տարածում:
- Կարողությունների զարգացում:
- Պետություն-մասնավոր հատված-դոնոր-համայնք համագործակցության զարգացում:
- Իրավական կարգավորում:
- Ուսուցիչ-ծնող համագործակցության սերտացում:
- Ուսուցչական համայնքի համագործակցության, փոխօգնության մշակույթի ձեւավորում:
- Դասապրոցեսը առավել արդյունավետ եւ ներառական դարձնելու հնարավորության ստեղծում:

Կրթական համակարգի վրա համավարակի թողած բացասական հետեւանքներն են.

- Կրթության իրավունքի իրացման անհնարինություն:
- Ուսուցիչների՝ համակարգչային հմտությունների եւ դասապրոցեսը առցանց եղանակով իրականացելու մեթոդական հմտությունների փորձարկում:

- Առցանց կրթության մոնիտորինգի եւ գնահատման համակարգի բացակայություն:
- Ընտանիքի անվերահսկելի եւ ուղղակի ազդեցություն աշակերտների ուսուցման գործընթացի վրա:
- Ֆիզիկական շփման բացակայություն:
- Սոցիալական լարվածության սրում:
- Աշակերտների անձնային որակների փորձարկում:
- Կրթական համակարգում սոցիալական արդարության, հավասարության, մասնակցայնության սկզբունքի խախտում:

- Եվ՛ ծնողները, եւ՛ ուսուցիչներն ու աշակերտները նշել են, որ աշակերտների հիմնական մասը մասնակցել է առցանց դասերին, սակայն առցանց կրթության հիմնախնդիրների շարքում ուսուցիչները մատնանշել են աշակերտների ցածր մասնակցությունը:

- Աշակերտներն առավել բարձր են գնահատել դասավանդման նյութերի հասանելիությունը եւ առավել ցածր՝ երեխաների նկատմամբ անհատական մոտեցում կիրառելու հնարավորությունը: Առցանց դասերի ժամանակ անհատական մոտեցման բացակայության մասին են վկայում նաեւ ծնողների գնահատականները:

- Առցանց դասերը հիմնականում վերարտադրվել են ավանդական դասարանային ձեւաչափով, ինչն էլ էականորեն ազդել է դրանց արդյունավետության վրա:

- Աշակերտները ավելի բարձր են գնահատել առցանց դասերի արդյունավետությունը, քան ուսուցիչներն ու ծնողները:

- Աշակերտները եւ ծնողները առավել արդյունավետ են համարել առցանց տարբերակով հումանիտար առարկաների մատուցման արդյունավետությունը, քան բնագիտական առարկաներինը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄՇԱԿՎԱԾ ՀԵՏԱՁՈՏԱԿԱՆ ԹԻՄԻ ԿՈՂՄԻՑ

- Իրականացնել կրթական համակարգի վրա համավարակի ազդեցության շարունակական գնահատում եւ ստացված արդյունքների հիման վրա մշակել արագ արձագանքման գործողությունների պլան:

- Մշտադիտարկել հեռավար կրթությունից դուրս մնացած երեխաների կրթական կարիքներն ու մշակել նրանց ներառումն ապահովող մեխանիզմները:

- Ներդնել հեռավար կրթության կառավարման համակարգ, որը հնարավորություն կտա շարունակաբար մշտադիտարկել, գնահատել կրթական գործընթացն ու ապահովել անհրաժեշտ որակ:

- Արտակարգ իրավիճակների համար ձեւավորել հեռավար կրթության համակարգող խորհուրդ՝ բազմամասնագիտական կազմով:
- Ներդնել հիբրիդային համակարգ ՝ դասերի մի մասը կազմակերպելով առցանց, մյուս մասը՝ առկա ձեւաչափով:
- Լիարժեքորեն եւ շարունակաբար օգտագործել հանրային հեռուստատեսության եւ ռադիոյի ռեսուրսը՝ հեռարձակելով առցանց դասեր:
- Մշակել եւ զարգացնել հեռավար կրթության մեթոդական հիմքերը. տեսանյութեր, աշակերտների եւ ուսուցիչների վերապատրաստումներ:
- Մշակել եւ ներդնել գիտելիքների գնահատման այլընտրանքային մեխանիզմներ:
- Շարունակաբար զարգացնել եւ կիրառել առցանց կրթական հարթակներ:
- Մանկավարժական կրթության մեջ ներառել էլեկտրոնային ուսուցման մեթոդներ, տեխնիկաներ, գործիքներ:
- Զարգացնել արտադասարանական կամ այլ կոմպետենցիաների ձեւավորմանն ուղղված մոտեցումները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԶԵՎԱԿԵՐՊՎԱԾ ԶԵԿՈՒՅՑԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

- Դպրոցներին տրամադրել անկախություն՝ ինքնուրույնաբար մշակելու եւ կիրառելու ճգնաժամային կառավարման համակարգեր՝ հարմարեցված դպրոցի կարիքներին:
- Դպրոցներին վերապահել կարիքների գնահատման գործառույթի իրականացումը:
- Թվայնացնել ուսումնական նյութերը՝ հարմարեցնելով դրանք աշակերտների անհատական կարիքներին:
- Մշակել եւ ներդնել ճգնաժամային կառավարման ծրագիր:
- Ձեւավորել առցանց ռեսուրսների բազա:
- Իրականացնել համավարակի ժամանակ բազմահամակազմ դասարաններում առցանց կրթության գնահատում:
- Ձեռնարկել քայլեր՝ ուղղված հեռավար կրթությունից դուրս մնացած երեխաների կրթական բացերի լրացմանը:
- Հավաքագրել եւ տարածել հեռավար կրթության հաջողված տեղական և միջազգային պրակտիկաները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Երեխաների իրավունքների իրավիճակի վերլուծություն,Սեյվ դը իլդրեն Հայաստան, 2015թ.
  https://cutt.ly/5bMvand

- Կրթության իրավունքի հասանելիության եւ հավասարության հիմնախնդիները ՀՀ հանրակրթության ոլորտում, Երեւան, 2017թ. ԲՀՀ Հայաստան:
  http://www.osf.am/wp-content/uploads/2017/09/Educ_Equity_MainData_PPT.pdf

- ՀՀ հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական պայմանների մոնիտորինգի արդյունքների զեկույց, Երեւան, 2019թ.
  https://transparency.am/files/publications/1575983241-0-311692.pdf?v=4[29.03.2021]

- ՀՀ պետական դպրոցներում ուսուցիչների կողմից ՏՀՏ կիրառության սոցիոլոգիական հետազոտություն, ԿՏԱԿ, Երեւան, 2018թ.
  file:///C:/Users/User/Downloads/Survey_teachers_2018%20(1).pdf

- Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար/առցանց կրթության կազմակերպման եւ իրականացման վերաբերյալ առցանց հարցման ամփոփ արդյունքներ:
  http://escs.am/files/files/2020-07-08/7d2cd52ba1106d36cc35bdf5eaabc0ee.pdf

- Alban Conto, C., Akseer, S., Dreesen, T., Kamei, A., Mizunoya, S., & Rigole, A. (2020). COVID-19: Effects of School Closures on Foundational Skills and Promising Practices for Monitoring and Mitigating Learning Loss (Innocenti Working Paper No. 2020-13). UNICEF Office of Research - Innocenti.
  https://cutt.ly/sbMxsMN

- Azevedo, J. P., Hasan, A., Goldemberg, D., Iqbal, S. A., & Geven, K. (2020). Simulating the potential impacts of COVID19 school closures on schooling and learning outcomes: A set of global estimates (Policy Research Working Paper 9284). The World Bank.
  https://cutt.ly/YbMzl9C

- Brossard, M., Cardoso, M., Kamei, A., Mishra, S., Mizunoya, S., & Reuge, N. (2020). Parental engagement in children's learning: Insights for remote learning response during COVID-19 (Innocenti Research Briefs no. 2020-09). UNICEF Office of Research - Innocenti.
  https://www.unicef-irc.org/publications/pdf/IRB%202020-09%20CL.pdf

- Gromada, A., Richardson, D., & Rees, G. (2020). Childcare in a global crisis: the impact of COVID-19 on work and family life (Innocenti Research Briefs no. 2020-18). UNICEF Office of Research - Innocenti.
  https://cutt.ly/dbMzGVL

- HOW MANY CHILDREN AND YOUNG PEOPLE HAVE INTERNET ACCESS AT HOME? Estimating digital connectivity during the COVID-19 pandemic.

https://cutt.ly/0bMc7x8

- Parental Engagement in Children's Learning, Innocenti Research Brief 2020-09, UNICEF. https://www.unicef-irc.org/publications/pdf/IRB%202020-09%20CL.pdf

- WHAT HAVE WE LEARNT? Overview of findings from a survey of ministries of education on national responses to COVID-19. https://data.unicef.org/resources/national-education-responses-to-covid19/

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ

Հիմնական տեղեկատուների հետ հարցազրույցի հարցաշար

Նշում հարցազրուցավարի համար՝ ներկայացնել կազմակերպությունը, հարցազրույցի նպատակը, ներկայացնել մասնակցության համաձայնության թերթիկը՝ ծանոթանալու եւ ստորագրելու/բանավոր համաձայնություն տալու, խնդրել հարցազրույցը ձայնագրելու թույլտվություն, ընդգծել, որ դա արվում է միայն տեղեկատվությունը չկորցնելու եւ վերլուծական աշխատանքների արդյունավետության համար եւ չի հրապարակվելու/տարածվելու:

1. Խնդրում եմ ներկայանալ՝ մասնագիտություն, զբաղվածություն, կրթության ոլորտում աշխատանքային փորձ:
2. Կարո՞ղ եք նշել, թե ինչ հիմնական խնդիրներ են առկա հանրակրթության ոլորտում:
3. Ի՞նչ ազդեցություն ունեցավ արտակարգ դրությունը հանրակրթության վրա՝ խնդրում եմ նշել դրական եւ բացասական ազդեցությունները:
4. Ինչպե՞ս կգնահատեք կրթական քաղաքականության (գործողություններ, միջոցառումներ) արդյունավետությունը արտակարգ դրության պայմաններում հետեւյալ տեսանկյուններից.
   - Հասցեականություն,
   - Արդյունավետություն,
   - Կայունություն:

   Խնդրում եմ գնահատել յուրաքանչյուր տեսանկյունը եւ ներկայացնել օրինակներ, հիմնավորումներ:
5. Ըստ Ձեզ, ինչպիսի՞ կարիքներ ունեին ուսուցիչները եւ աշակերտները արտակարգ դրության պայմաններում առցանց կրթության արդյունավետ կազմակերպման տեսանկյունից (համակարգչային հմտություններ, տեխնիկական ապահովվածություն, եւ այլն):
6. Ո՞ր կարիքներին հնարավոր եղավ արձագանքել: Ըստ Ձեզ, ինչպե՞ս եւ որքանո՞վ է արդյունավետ եղել արձագանքը :
7. Իսկ ո՞ր կարիքները չստացան համարժեք արձագանք: Ինչու՞:
8. Ըստ Ձեզ, ի՞նչ քայլեր կարելի էր ձեռնարկել արտակարգ դրության ժամանակ առավել արդյունավետ կրթության կազմակերպման համար:
9. Գնահատել արտակարգ դրության պայմաններում առցանց կրթության կազմակերպման որակը հետեւյալ տեսանկյուններից.

- Ուսուցիչների համակարգչային գիտելիքները, առցանց գործիքների եւ հարթակների կիրառության հմտությունները եւ այլն։
- Անհրաժեշտ մեթոդական ուղեցույցերի, փաստաթղթերի առկայությունը եւ կիրառությունը,
- Աշակերտների համակարգչային գիտելիքները, առցանց գործիքների եւ հարթակների կիրառության հմտությունները եւ այլն։
- Աշակերտների եւ ուսուցիչների տեխնիկական ապահովվածությունը։
- Ուսուցիչների մեթոդական, մանկավարժական հմտությունները։
- Առցանց կրթության կառավարումը՝ պլանավորում, իրականացում, ընթացիկ մշտադիտարկում, գնահատում, ինչպես նաեւ բարելավում։

10. Առցանց կրթության որակի հետ կապված հիմնական խնդիրներն, ըստ Ձեզ, որո՞նք էին։
11. Առցանց կրթության հասանելիության հետ կապված հիմնական խնդիրները որո՞նք էին։
12. Ի՞նչ հիմնական ձեռքբերում, դրական կողմ կնշեք, որ առկա էին արտակարգ դրության ժամանակ կրթության իրականացման գործընթացում։
13. Իսկ ինչպե՞ս կբնութագրեք արտակարգ դրության ընթացքում հանրակրթությունից դուրս մնացած երեխաներին։ Ովքե՞ր են նրանք. սեռ, տարիք, եւ այլն։
14. Ինչպե՞ս կգնահատեք ԿԱՊԿՈՒ (Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) երեխաների կրթության իրացումը արտակարգ դրության պայմաններում։ Խնդրում եմ ներկայացնել հանդիպած խնդիրները, լուծումները եւ քայլերը։
15. Որքանո՞վ եք ծանոթ, կրթությունից դուրս մնալու հետ կապված կանխարգելիչ ինչպիսի միջոցառումներ են իրականացվում պետական, միջազգային եւ հասարակական կազմակերպությունների կողմից՝ արտակարգ դրությունից առաջ եւ հետո։
16. Ինչպե՞ս կգնահատեք այդ միջոցառումների արդյունավետությունը, հասցեականությունը։ Խնդրում եմ հիմնավորել, բերել օրինակներ։ Անդրադառնանք առանձին պետական, միջազգային եւ հասարակական կառույցների կողմից իրականացված միջոցառումներին։
17. Եթե դեպքերի ընթացքը հանգեցնի հեռավար ուսուցման, ի՞նչը այլ կերպ կարելի է կազմակերպել հանրակրթության կանոնավոր գործունեության ապահովման համար։ Եվ ինչո՞ւ։
18. Կա՞ որեւէ հարց, որի մասին չխոսեցինք, սակայն կարեւոր եք համարում նշել։

Շնորհակալություն հայտնել հարցազրույցի համար։

Ծնողի հետ օնլայն հարցման հարցաշար

Հարգելի ծնող, «Քաղաքացիական Երիտասարդական Կենտրոն» ՀԿ-ն իրականացնում է հարցում՝ հեռավար ուսուցման վերաբերյալ: Ձեր կարծիքը կարեւոր է՝ հասկանալու համար, թե որոնք են եղել հիմնական խնդիրները եւ մշակել դրանց լուծմանն ուղղված քայլեր: Հարցումն անանուն է եւ մասնակցությունը կամավոր: Ձեր կողմից նշված պատասխանները ներկայացվելու են ընդհանրացված ձեւով:
Շնորհակալություն մասնակցության համար:

1. Դպրոցահասակ քանի՞ երեխա ունեք:_____
2. Ո՞ր դասարանում է/ են սովորում Ձեր երեխան/ ները:_____
3. Համավարակի ընթացքում, արտակարգ դրության պայմաններում Ձեր երեխան/ները մասնակցե՞լ է/են առցանց դասերին:
   1. Այո (անցում հարց 6-ին)
   2. Ոչ
4. Նշել դասերին չմասնակցելու հիմնական պատճառը:
   1. Տեխնիկական միջոցների՝ համակարգիչ, սմարթֆոն եւ այլն, առկայություն
   2. Համացանցի հասանելիություն
   3. Կենցաղային անհարմարություններ
   4. Երեխայի գերհոգնածություն
   5. Այլ_____
5. Արդյո՞ք փորձել եք ներգրավել Ձեր երեխային ուսումնական գործընթացում այլ եղանակով:
   1. Ինքս եմ զբաղվել երեխայի կրթությամբ
   2. Դասապատրաստման եմ ուղարկել
   3. Օգտագործել եմ առցանց ռեսուրսներ
   4. Այլ_____
   5. Չեմ փորձել
6. Դպրոցը որեւէ կերպ փորձե՞լ է աջակցել Ձեր երեխային ներգրավվելու առցանց դասերին:
   1. Այո
   2. Ոչ (անցում 8)
7. Ինչպե՞ս:
   1. Ապահովել է համակարգչով
   2. Ապահովել է համացանցով
   3. Ապահովել է անհատական գրաֆիկ
   4. Այլ_____
8. Գնահատել առցանց դասընթացներին երեխաների մասնակցության ակտիվությունը 1-4 սանդղակով, որտեղ 1-ը բոլորովին ակտիվ չէին, իսկ 4-ը շատ ակտիվ էին:

9. Փորձեք գնահատել առցանց դասերն ըստ առարկաների 1-4 սանդղակով, որտեղ 1-ը ամենացածր գնահատականն է, իսկ 4-ն ամենաբարձր։

Առարկա	**Գնահատական**	**Երեխանե րի ակտիվություն**	**Ուսուցիչի մանկավարժական հմտությունները**	**Ուսուցիչի համակարգչային գիտելիքները**	**Օժանդակ նյութերի օգտագործումը դասերի ընթացքում**
Աշխարհագրություն					
Հայոց լեզու					
Գրականություն					
Պատմություն					
Օտար լեզու					
Ռուսաց լեզու					
Ֆիզիկա					
Քիմիա					
Կենսաբանություն					
Հանրահաշիվ					
Երկրաչափություն					
Տեխնոլոգիա					
ՆԶՊ					

10. Առցանց դասընթացների ընթացքում արդյո՞ք դպրոցի տնօրինությունը, աշխատակիցները հետաքրքրվել են, թե ինչպես են անցնում առցանց դասերը երեխաների մոտ։
    1. Այո
    2. Ոչ

11. Արդյո՞ք Դուք ներկայացրել եք առցանց դասերին երեխայի մասնակցության Ձեր մտահոգությունները։
    1. Այո
    2. Ոչ (անցում 14)

12. Ի՞նչ մտահոգություններ ունեիք։
    _____

13. Արդյո՞ք Ձեզ մտահոգող հարցը արդյունքում լուծվեց։
    1. Այո
    2. Ոչ

14. Ի՞նչն է պատճառը, որ չեք ներկայացրել։ ———————————————————————————
15. Օրվա ընթացքում Դուք կամ Ձեր ընտանիքի անդամներից որեւէ մեկը որքա՞ն ժամանակ եք անցկացնում երեխայի/ երեխաների դասապատրաստման վրա։ ——— ժամ
16. Իսկ արտակարգ դրության ժամանակ որքա՞ն ժամանակ եք տրամադրել։ Եթե չեք հատկացնում, ապա ո՞րն է պատճառը։
———ժամ
17. Արդյո՞ք Ձեր երեխան/ ները կանոնավոր հաճախել են դպրոց նախքան արտակարգ դրությունը։ Եթե ոչ, ապա ինչո՞ւ։

Շնորհակալություն հայտնել հարցազրույցի համար։

Ծնողի հետ հարցազրույցի հարցաշար

Նշում հարցազրուցավարի համար՝ ներկայացնել կազմակերպությունը, հարցազրույցի նպատակը, ներկայացնել մասնակցության համաձայնության թերթիկը՝ ծանոթանալու եւ ստորագրելու/բանավոր համաձայնություն տալու, խնդրել հարցազրույցը ձայնագրելու թույլտվություն, ընդգծել, որ դա արվում է միայն տեղեկատվությունը չկորցնելու եւ վերլուծական աշխատանքների արդյունավետության համար եւ չի հրապարակվելու/տարածվելու: Նշել, որ հարցազրույցը իրականացվում է անանուն, զեկույցում չի նշվելու մասնակցի անձնական տվյալները: Նշել հարցազրույցի ընդհանուր տեւողությունը՝ 45-60 րոպե:

1. Դպրոցահասակ քանի՞ երեխա ունեք:
2. Ո՞ր դասարանում է/ են սովորում Ձեր երեխան/ ները:
3. Համավարակի ընթացքում, արտակարգ դրության պայմաններում Ձեր երեխան/ները մասնակցե՞լ է/են առցանց դասերին: Եթե ոչ, նշել դասերին չմասնակցելու պատճառները: Իսկ ո՞րն է ամենագլխավոր պատճառը: (Եթե կդժվարանա պատասխանել, ճշտել այս տարբերակներից ո՞րն է առավել համապատասխան իրենց իրավիճակին)՝
   - Տեխնիկական միջոցների՝ համակարգիչ, սմարթֆոն եւ այլն, առկայություն
   - Համացանցի հասանելիություն
   - Կենցաղային անհարմարություններ
   - Երեխայի գերհոգնածություն
   - Այլ_____
4. Արդյո՞ք փորձել եք ներգրավել Ձեր երեխային ուսումնական գործընթացում այլ եղանակով (դասընկերների ծնողներից տնային աշխատանքների տեղն իմանալով եւ այլն):
5. Դպրոցը որեւէ ձեւ փորձե՞լ է աջակցել Ձեր երեխային ներգրավվելու առցանց դասերին: Եթե այո, ինչպե՞ս:
6. Ստացե՞լ եք որեւէ աջակցություն Ձեր երեխային/ երեխաներին հանրակրթության մեջ ներգավվելու համար: Ինչպիսի՞ աջակցություն, ո՞ւմ կողմից: Ինչպե՞ս կգնահատեք այդ աջակցության ազդեցությունը:
7. Եթե երեխան/ները մասնակցել են առցանց դասերին, ինչպե՞ս կգնահատեք նրանց ներգրավվումը՝ նրանք ակտիվորեն ներգրավված էին, կատարում էին տնային հանձնարարությունները, թե՞ միայն ներկա էին գտնվում առցանց դասերին:
8. Ինչպե՞ս կգնահատեք ուսուցիչների աշխատանքը առցանց դասերի իրականացման գործընթացում:
9. Օրվա ընթացքում Դուք կամ Ձեր ընտանիքի անդամներից որեւէ մեկը որքա՞ն ժամանակ եք անցկացնում երեխայի/ երեխաների դասապատրաստման վրա: Իսկ արտակարգ դրության ժամանակ որքա՞ն ժամանակ եք տրամադրել: Եթե չեք հատկացնում, ապա ո՞րն է պատճառը:
10. Արդյո՞ք Ձեր երեխան/ ները կանոնավոր հաճախել են դպրոց նախքան արտակարգ դրությունը: Եթե ոչ, ապա ինչո՞ւ:

11. Ինչպիսի՞ առաջարկություններ ունեք՝ ուղղված Ձեր երեխայի/երեխաների ներգրավմանը կրթական գործընթացներին, այդ թվում առցանց եւ/կամ հեռավար ձեւաչափով։
12. Կա՞ որեւէ հարց, որի մասին չխոսեցինք, սակայն կարեւոր եք համարում նշել՝ հանրակրթությունից դուրս մնացած երեխաների կրթության իրավունքի իրացման հետ կապված արտակարգ դրությունից առաջ եւ հետո։ Եթե այո, խնդրում եմ նշել։

Շնորհակալություն հայտնել հարցազրույցի համար։

Ուսուցչի հետ օնլայն հարցման հարցաշար

Հարգելի ուսուցիչ, «Քաղաքացիական Երիտասարդական Կենտրոն» ՀԿ-ն իրականացնում է հարցում՝ հեռավար ուսուցման վերաբերյալ: Ձեր կարծիքը կարեւոր է՝ հասկանալու համար, թե որոնք են եղել հիմնական խնդիրները եւ մշակել դրանց լուծմանն ուղղված քայլեր: Հարցումն անանուն է եւ մասնակցությունը կամավոր: Ձեր կողմից նշված պատասխանները ներկայացվելու են ընդհանրացված ձեւով:
Շնորհակալություն մասնակցության համար:

1. Ինչպե՞ս կգնահատեք Ձեր համակարգչային հմտությունները:
    1. Գերազանց
    2. Լավ
    3. Բավարար
    4. Անբավարար
2. Երբեւէ մասնակցե՞լ եք համակարգչային հմտությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման:
   1. Այո 2. Ոչ
3. Երբեւէ մասնակցե՞լ եք հեռավար կրթության վերաբերյալ վերապատրաստման:
   1. Այո 2. Ոչ
4. Երբեւէ առցանց դասընթաց վարե՞լ եք:
   1. Այո 2. Ոչ
5. Երբեւէ առցանց դասընթացի մասնակցե՞լ եք:
   1. Այո 2. Ոչ
6. Որքա՞ն արդյունավետ եք համարում արտակարգ դրության ժամանակ առցանց կրթության կազմակերպումը ընդհանրապես:
   1. Լիովին արդյունավետ
   2. Հիմնականում արդյունավետ
   3. Հիմնականում անարդյունավետ
   4. Բացարձակ անարդյունավետ

7. Որո՞նք են առցանց կրթության հիմնական խնդիրները:
   1. Աշակերտների մասնակցության ցածր մակարդակը
   2. Աշակերտների համակարգչային հմտությունների պակասը
   3. Ուսուցիչների համակարգչային հմտությունների պակասը
   4. Աշակերտների մոտիվացվածության պակասը
   5. Այլ, նշել

8. Որքա՞ն արդյունավետ եք համարում Ձեր կողմից անցկացված առցանց դասերը :
   1. Լիովին արդյունավետ
   2. Հիմնականում արդյունավետ
   3. Հիմնականում անարդյունավետ
   4. Բացարձակ անարդյունավետ

9. Որո՞նք են Ձեր կողմից անցկացված առցանց դասերի ընթացքում հանդիպող հիմնական խնդիրները։
   1. Աշակերտների մասնակցության ցածր մակարդակը
   2. Աշակերտների համակարգչային հմտությունների պակասը
   3. Իմ համակարգչային հմտությունների պակասը
   4. Աշակերտների մոտիվացվածության պակասը
   5. Այլ, նշել

10. Ինչպե՞ս էիք նախապատրաստվում առցանց դասերին։
   1. Դասապլան էի կազմում
   2. Կարդում էի մասնագիտական գրականություն
   3. Կարդում էի առցանց դասերի կազմակերպման ուղեցույցերի հետ
   4. Չէի պատրաստվում
   5. Այլ, նշել

11. Ինչպե՞ս էիք ներկայացնում նոր դասը առցանց դասերի ժամանակ։
   1. Բանավոր ներկայացում
   2. Հարց ու պատասխան
   3. Ընթերցում դասագրքից
   4. Այլ, նշել

12. Ինչպե՞ս էիք ամրապնդում հին դասը օնլայն դասերի ժամանակ։
   1. Գրավոր հանձնարարություններ
   2. Բանավոր ներկայացում
   3. Հարց ու պատասխան
   4. Խմբային աշխատանք
   5. Տնային հանձնարարություն
   6. Այլ, նշել

13. Աշակերտների ո՞ր մասն է մասնակցում Ձեր առցանց դասերին։
   1. Դասարանների հիմնական մասը
   2. Դասարանների աշակերտների կեսը
   3. Դասարանների աշակերտների փոքր մասը
   4. Մի քանի աշակերտ

14. Աշակերտների ո՞ր մասն է ԱԿՏԻՎ մասնակցում դասերին։
   1. Դասարանների հիմնական մասը
   2. Դասարանների աշակերտների կեսը
   3. Դասարանների աշակերտների փոքր մասը
   4. Մի քանի աշակերտ

15. Ո՞ր աշակերտները չէին մասնակցում առցանց դասերին։ Հնարավոր է մի քանի պատասխան։
    1. Սոցիալապես անապահով
    2. Ծնողազուրկ
    3. Կրթությամբ չհետաքրքրվող
    4. Այլ

16. Ձեր դասավանդած դասարանում կայի՞ն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներ։
    1. Այո 2. Ոչ (անցում հարց 18)
17. Մասնակցու՞մ էին կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտները առցանց դասերին։
    1. Այո 2. Ոչ
18. Գնահատու՞մ էիք աշակերտներին առցանց դասերի ժամանակ։
    1. Այո 2. Ոչ
19. Ունեիք արդյո՞ք անհրաժեշտ տեխնիկական միջոցներ արտակարգ դրության ժամանակ։ Խնդրում ենք նշել։

	Միջոց	Ունեի	Կիրառում էի առցանց դասերի համար
1.	Համակարգիչ		
2.	Պլանշետ		
3.	Սմարթ հեռախոս		
4.	Համացանց		
5.	Այլ, նշել		

20. Առցանց դասընթացների ընթացքում արդյո՞ք դպրոցի տնօրինությունը, աշխատակիցները հետաքրքրվել են, թե ինչպես են անցնում առցանց դասերը։
    1.Այո
    2.Ոչ

21.Իսկ Դուք ներկայացրել եք արդյո՞ք առցանց դասերի կազմակերպման վերաբերյալ Ձեր մտահոգությունները։
    1.Այո
    2.Ոչ (անցում հարց 24)

22.Ի՞նչ մտահոգություններ ունեիք։
    _____

23.Արդյո՞ք Ձեզ մտահոգող հարցը արդյունքում լուծվեց։
    1.Այո
    2.Ոչ

24.Ի՞նչն է պատճառը, որ չեք ներկայացրել։ ——————————————————————

25. Ինչպե՞ս եք գնահատում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ձեռնարկած քայլերը արտակարգ դրության ժամանակ կրթության կազմակերպմանը։

		Լիովին դրական	Հիմնականում դրական	Հիմնականում բացասական	Բացարձակ բացասական
1.	Աշակերտների կիսամյակային գնահատման համար հիմք ընդունել մինչեւ 13.03.2020 գնահատականները				
2.	Ուսուցիչների Աջակցություն				
3.	Աշակերտների աջակցություն տեխնիկական Միջոցներով				
4.	Արագ արձագանքում Խնդիրներին				

26.Ինչպիսի՞ վերապատրաստումների կարիք ունեք առցանց դասընթացների արդյունավետության բարձրացման համար։

——————————————————

27. Ի՞նչ քայլերի պետք է դիմի նախարարությունը հեռավար կրթության որակի բարձրացման համար։

——————————————————

28. Եթե դեպքերի ընթացքը հանգեցնի հեռավար ուսուցման, ի՞նչը այլ կերպ կարելի է կազմակերպել հանրակրթության կանոնավոր գործունեության ապահովման համար։

——————————————

29. Ձեր կրթությունը

1. Միջին մասնագիտական
2. Բարձրագույն
3. Հետբուհական

30. Սեռ 1. Արական 2. Իգական

31. Տարիք ——————

32. Ձեր մանկավարժական ստաժը։

1. 1-5 տարի
2. 6-10 տարի
3. 11-20 տարի

4. 20 տարուց ավել

33. Մասնագիտություն _____

34. Ի՞նչ առարկա/ներ եք դասավանդում։

35. Ո՞ր դասարաններում եք դասավանդում։ Նշել բոլոր հնարավոր տարբերակները

1. 1-4
2. 5-9
3. 10-12

36. Ձեր բնակավայրը

1. Գյուղ
2. Քաղաք

37. Մարզը

1. Երեւան
2. Արարատ
3. Արմավիր
4. Արագածոտն
5. Կոտայք
6. Տավուշ
7. Լոռի
8. Շիրակ
9. Սյունիք
10. Գեղարքունիք
11. Վայոց Ձոր

38. Դպրոցի գտնվելու վայրը

1. Երեւան
2. Արարատ
3. Արմավիր
4. Արագածոտն
5. Կոտայք
6. Տավուշ
7. Լոռի
8. Շիրակ
9. Սյունիք
10. Գեղարքունիք
11. Վայոց Ձոր

39. Այլ զբաղվածություն ունե՞ք։

1. Այո 2. Ոչ

40. Խնդրում եմ նշել, ունեք արդյո՞ք առողջական որեւէ խնդիր։

1. Այո 2. Ոչ

41. Ընտանիքի անդամների թիվը _____

42. Ընտանիքում անչափահասների թիվը _____

43. Խնդրում եմ բնութագրել Ձեր ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը։

2. Գումարը չի բավականացնում անգամ սնունդ գնելու համար։
3. Գումարը բավականացնում է սնունդ, բայց ոչ հագուստ գնելու համար։
4. Գումարը բավականացնում է սնունդ եւ հագուստ գնելու համար, բայց այն բավարար չէ թանկարժեք իրեր, օրինակ հեռուստացույց, կամ լվացքի մեքենա գնելու համար։
5. Մենք կարող ենք մեզ թույլ տալ որոշակի թանկարժեք իրեր գնել (օրինակ, հեռուստացույց, կամ լվացքի մեքենա)։
6. Մենք կարող ենք մեզ թույլ տալ թանկարժեք իրեր գնել, գնալ ամառային հանգստի, մեքենա գնել, բայց չենք կարող բնակարան գնել։
7. Մենք կարող ենք նույնիսկ բնակարան գնել։

Շնորհակալություն

Աշակերտների հետ օնլայն հարցման հարցաշար

Հարգելի աշակերտ, «Քաղաքացիական Երիտասարդական Կենտրոն» ՀԿ-ն իրականացնում է հարցում՝ հեռավար ուսուցման վերաբերյալ: Ձեր կարծիքը կարեւոր է՝ հասկանալու համար, թե որոնք են եղել հիմնական խնդիրները եւ մշակել դրանց լուծմանն ուղղված քայլեր: Հարցումն անանուն է եւ մասնակցությունը կամավոր: Ձեր կողմից նշված պատասխանները ներկայացվելու են ընդհանրացված ձեւով:
Շնորհակալություն մասնակցության համար:

Մարզ———————————— Դպրոց————————————
Բնակավայր——————————— Դասարան———————————

1. Սովորաբար հաճույքո՞վ եք գնում դպրոց:
   1.Այո 2.Ոչ

2. Ի՞նչ զգացողություններ եք հիմնականում ունենում դպրոցում:
   1. Ոգեւորություն
   2. Անհանգստություն
   3.Վախ
   4. Ուրախություն
   5. Տագնապ
   6. Հոգնածություն
   7. Անտարբերություն
   8. Այլ

3. Խնդրում եմ նկարագրել, թե ինչ զգացիք, երբ տեղեկացաք, որ դասերն իրականացվելու են հեռավար եղանակով:
   1. Ոգեւորություն
   2. Անհանգստություն
   3. Վախ
   4. Ուրախություն
   5. Տագնապ
   6. Հոգնածություն
   7. Անտարբերություն
   8. Այլ

4. Նկարագրեք խնդրեմ, հեռավար դասերին Ձեր մասնակցության հաճախականությունը:

   1. Մասնակցում էի բոլոր դասերին
   2. Մասնակցում էի դասերի հիմնական մասին
   3. Հիմնականում մի քանի առարկայի դասերի եմ
   մասնակցել4. Շատ քիչ դասերի եմ մասնակցել
   5. Ընդհանրապես չեմ մասնակցել

5. Խնդրում եմ նշել հեռավար դասերից Ձեր բացակայության պատճառները։
   1. Տեխնիկական միջոցների բացակայություն
   2. Համացանցի անհասանելիություն
   3. Բնակարանի ոչ հարմարավետ պայմաններ
   4. Ցանկության բացակայություն
   5. Առցանց դասերի կազմակերպման անհարմարություններ (ժամանակ, տեւողություն, ծրագրային ապահովում, դասավանդման մեթոդներ եւ այլն)
   6. Այլ————————————————

6. Մինչ արտակարգ դրությունը որքա՞ն հաճախ էիք բացակայում։
   1. Տարին մի քանի անգամ
   2. Ամիսը մի քանի անգամ
   3. Շաբաթը մի քանի անգամ
   4. Գրեթե ամեն օր

7. Ո՞րն էր բացակայության հիմնական պատճառը։
   1. Աշխատանք
   2. Ընտանեկան հոգսեր
   3. Առողջական խնդիրներ
   4. Ցանկության բացակայություն
   5. Այլ զբաղվածություն
   6. Այլ————————————————

8. Ինչպե՞ս կգնահատեք հեռավար դասերի կազմակերպման որակը հետեւյալ տեսանկյուններից.
   1. Թեմայի որակյալ մատուցում ուսուցչի կողմից, 1—2—3—4—5
   2. Ուսուցչի համացանցային կապի անխափան հասանելիություն, 1—2—3—4—5
   3. Դասավանդման նյութերի, դասագրքերի հասանելիություն, 1—2—3—4—5
   4. Երեխաների նկատմամբ անհատական մոտեցում կիրառելու հնարավորություն։
      1—2—3—4—5

9. Փորձեք գնահատել առցանց դասերն ըստ առարկաների 1-4 սանդղակով, որտեղ 1-ը ամենացածր գնահատականն է, իսկ 4-ն ամենաբարձր։

Առարկա	**Գնահատական**	**Երեխաների ակտիվություն**	**Ուսուցիչի մանկավարժական հմտությունները**	**Ուսուցիչի համակարգչային գիտելիքները**	**Օժանդակ նյութերի օգտակործումը դասերի ընթացքում**
Աշխարհագրության					
Հայոց լեզու					
Գրականություն					
Պատմություն					
Օտար լեզու					
Ռուսաց լեզու					
Ֆիզիկա					

Քիմիա					
Կենսաբանության,					
Հանրահաշիվ					
Երկրաչափություն					
Տեխնոլոգիա					
ՆԶՊ					

10. Ունեք արդյո՞ք տանը համացանցի հասանելիություն։
11. Հետեւյալ տեխնիկական միջոցներից ո՞րն էիք կիրառում հեռավար դասերի ժամանակ։
    1. համակարգիչ
    2. պլանշետ
    3. սմարթ հեռախոս
    4. այլ ——————————————
12. Եթե չէիք մասնակցում, ապա ի՞նչ քայլեր էր ձեռնարկում դպրոցը Ձեզ դասերին մասնակից դարձնելու համար։
    1. Ոչ մի քայլ
    2. Անհատական ծրագիր, գրաֆիկ
    3. Համակարգչի տրամադրում
    4. Այլ ——————
13. Խնդրում եմ նշել, ունեք արդյո՞ք առողջական որեւէ խնդիր։
    1. Այո 2. Ոչ
14. Ընտանիքի անդամների թիվը ————
15. Դպրոց հաճախող երեխաների թիվը, քեզ ներառյալ ————
16. Ծնողների կրթությունը
17. Ծնողների զբաղվածությունը
18. Սեռ ——————
19. Խնդրում եմ բնութագրել Ձեր ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը։
    1. Գումարը չի բավականացնում անգամ սնունդ գնելու համար։
    2. Գումարը բավականացնում է սնունդ, բայց ոչ հագուստ գնելու համար։
    3. Գումարը բավականացնում է սնունդ եւ հագուստ գնելու համար, բայց այն բավարար չէ թանկարժեք իրեր, օրինակ հեռուստացույց, կամ լվացքի մեքենա, գնելու համար։
    4. Մենք կարող ենք մեզ թույլ տալ որոշակի թանկարժեք իրեր գնել (օրինակ, հեռուստացույց, կամ լվացքի մեքենա)։
    5. Մենք կարող ենք մեզ թույլ տալ թանկարժեք իրեր գնել, գնալ ամառային հանգստի, մեքենա գնել, բայց չենք կարող բնակարան գնել։
    6. Մենք կարող ենք նույնիսկ բնակարան գնել։

Տեղեկատվություն դպրոցների տնօրեններից

1. Քանի՞ գործող համակարգիչ ունի դպրոցը։
2. Արդյո՞ք դպրոցում առկա է համացանցին մշտական հասանելիություն։
3. Արդյո՞ք ուսուցիչները համակարգչային հմտությունների, համակարգչով կոնկրետ առարկաների դասավանդման, մեթոդաբանական կամ մասնագիտական այլ վերապատրաստումներ անցել են։ Եթե այո, ի՞նչ հաճախականությամբ եւ ուսուցիչների ո՞ր մասը։
4. Մոտավոր գնահատմամբ Ձեր դպրոցի ուսուցիչների ո՞ր մասը համակարգչային հմտություններ ունի (MS Word, Excel եւ այլն)։
5. Իսկ ո՞ր մասն է կարողանում կիրառել առցանց հաղորդակցության, դասընթացների կազմակերպման գործիքները։
6. Նշել արտակարգ դրության պայմաններում առցանց կրթության կազմակերպման հետ կապված դժվարությունները/ խնդիրները, որոնց բախվել է Ձեր դպրոցը։
7. Ի՞նչ սկզբունքով եք իրականացրել առցանց կրթության պլանավորումը։ Արդյո՞ք եղել է համապատասխան մեթոդական ձեռնարկ, ուղեցույց եւ այլն։
8. Իրականացնում էիք արդյո՞ք առցանց դասերի իրականացման ընթացքի մոնիտորինգ, կամ արդյունքների գնահատում։ Եթե այո, ապա ի՞նչ պարբերականությամբ։
9. Դպրոցում սովորող երեխաներից քանի՞սը չեն մասնակցել առցանց դասերին։
10. Ի՞նչն է պատճառը։ Ինչպե՞ս կբնութագրեք այդ երեխաներին։
11. Ի՞նչ քայլեր է իրականացրել դպրոցը այդ երեխաներին ներգրավելու նպատակով։
12. Առցանց կրթության արդյունավետ կազմակերպման համար արդյո՞ք իրականացրել եք ուսուցիչների եւ աշակերտների կարիքների գնահատում։
13. Ի՞նչ կարիքներ եք բացահայտել եւ ինչպե՞ս եք փորձել արձագանքել այդ կարիքներին։
14. Արդյո՞ք բոլոր առարկաներն են առցանց կազմակերպվել։
15. Եթե ոչ, ո՞ր առարկաները չեն կազմակերվել եւ ինչու՞։
16. Արդյո՞ք բոլոր ուսուցիչներն են առցանց դասընթացներ իրականացրել։
17. Եթե ոչ, ապա ո՞ր ուսուցիչները չեն պարապել։ Նշել տարիքը, դասավանդման առարկան եւ պատճառները։

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ

1. ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության Կրթության զարգացման եւ նորարարության ազգային կենտրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արտաշես Թորոսյան
2. ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության հանրակրթության վարչության պետի այս պահի պարտակությունները կատարող Սուսաննա Ազատյան
3. Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի հեռավար ուսուցման կազմակերպման բաժնի ղեկավար Հայկ Դավեյան
4. Երեւանի Պետական Համալսարանի դասախոս, կրթության փորձագետ Սերոբ Խաչատրյան
5. «Կրթական քաղաքացիական նախաձեռնության» անդամ, քաղաքագիտական գիտությունների թեկնածու, «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի տնօրեն Վահրամ Սողոմոնյան
6. Համաշխարհային բանկի կրթության ծրագրերի պատասխանատու, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Անուշ Շահվերդյան
7. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կրթական ծրագրերի բաժնի ղեկավար Ալվարդ Պողոսյան
8. «Պարադիգմա» կրթական հիմնադրամի հիմնադիր Նարեկ Մանուկյան